Azg
armenian daily
4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1998 ՈՒՐԱԹ #164 (1667)

Շվեյցարական մարդատար օդանավ կործանվեց կանադական ափի մոտ

ՆՅՈՒ ՅՈՐՔ: Երեկ հեսմիջօրեին շվեյցարական Swissair ընկերության օդանավ կործանվեց Կանադայի ափերի մոտ, Նովա Սկոտիայում, Հալիֆաքսից մի քանի կմ հեռու: Մութ ջրերի մեջ ընկղմված օդանավում կային 229 ուղեւորներ, որոնցից 14-ը՝ անձնակազմի անդամներ, որոնք Նյու Յորքից թռչում էին դեպի ժնեւ:

Օդանավը, Մակդոնալ Դուգլաս MD-11 տիպի, փորձում էր Հալիֆաքսի օդակայանում պարտադիր վայրէջք կատարել, երբ, ականատեսների վկայությամբ, հրկիզվող գնդի նման մխրճվեց ծովի ջրերի մեջ:

Հալիֆաքսի օդակայանի հսկիչ աշտարակի վկայությամբ, օդանավը շարժիչների խանգարում է ունեցել եւ շտապ վայրէջքի արտոնություն խնդրել, միաժամանակ տեղեկացնելով, որ դատարկում է վառելանյութի պաշարի մեծ մասը՝ պայթյունից խուսափելու համար:

Դեռեւս ճշգրիտ տվյալներ չկան զոհերի թվի մասին, փրկարար ջոկատները փորձում են հայտնաբերել վերապրողներին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ

Կառավարությունը խնդրատում է ԿԲ փորձարարությունը

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԱՔԱՐՅԱՆ

Վարչապետ Արմեն Դարբինյանը, երեկ ուշ երեկոյան վերադառնալով Երեւան, հայտնաբերեց հայաստանյան ֆինանսական շուկայում նոր իրավիճակ՝ ազգային արժույթի ակնհայտ անկմամբ՝ մեկ դոլարի համար մի պահ առդեն պահանջում էին 530 դրամ, ապա՝ 517-520: Տիաճ անակնկալ: Երեկ առավոտյան սկսված կառավարության նիստի ընթացքում եւ նիստից դուրս խնդրատություն է հնչել Կենտրոնական բանկի քաղաքականության հանդեպ, որը չորեքշաբթի տեղի ունեցած ԿԲ խորհրդի նիստից հետո պաշտոնապես հրապարակեց խորհրդի անդամ Սերսես Երիցյանը. չֆիքսել փոխարժեքը՝ սպասելով ինքնակարգավորման: ԿԲ այս քաղաքականությունը՝ չմիջամտել ֆինանսական շուկայում տեղի ունեցող երեւույթներին, որ նշանակում է հրաժարվել վերահսկողական գործառույթից, ինչպես հայտնի դարձավ «Ազգին», կառավարության կողմից որակվել է որպես ֆագնապալի «փորձարարություն» (իմա՝ էքսպերիմենտ):



Ռուսաստանյան ճգնաժամի առաջին իսկ օրերից մեր տնտեսական եւ քաղաքական շրջանակներում լուրջ մտահոգություն առաջացավ ազգային դրամի ճակատագրի վերաբերյալ, որի արժեզրկումը ուղղակի ցուցիչն է Հայաստանում նախաճգնաժամային երեւույթների կամ խուճապի առաջացման: Արմեն Դարբինյանը, վերլուծելով ռուսաստանյան ճգնաժամի առաջացման պատճառները, մեր շուկայի ապահովության համար առանձնացրել էր երեք գործոն. ա) բյուջեի իրատեսական հաշվարկը՝ եկամուտների եւ ծախսերի հարաբերակցության առումով, բ) ՊԿՊ-ների շուկայում վերահսկելի իրադրություն բյուջեի դեֆիցիտը կառավարելու ունարավորությամբ, գ) մեր ԿԲ-ի կողմից բանկային համակարգի խիստ վերահսկում:

Տես էջ 2

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ամերիկյան Սենատը հատատեց Հայաստանին 90 միլիոնի օգնության հատկացումը

Պահպանվեց 907 հոդվածը

Սեպտեմբերի 2-ին Մ. Նահանգների Սենատը որոշեց 1999 թ. ֆինանսական տարվա համար 90 մլն դոլարի օգնություն Հայաստանին, տեղեկացնում է Ամերիկայի հայկական համագումարից ստացված հաղորդագրությունը: Նշված գումարի 10 մլն դոլարը տրամադրվելու է Հայաստանի ամերիկյան համալսարանին, իսկ 4 միլիոնը՝ Հայկական ատոմակայանի անվտանգության համակարգի բարելավմանը: Օրինագծին կողմ են քվեարկել 90 սենատոր, դեմ 3, իսկ ձեռնպահ՝ 7: 1998 թ. համեմատ, Հայաստանին տրամադրվող օգնությունը փաստորեն աճել է 2,5 մլն դոլարով: Սակայն հատուկ գումար չի հատկացվել Լեռնային Ղարաբաղին:

Մյուս կողմից, օրինագծի ընդունումը որեւէ փոփոխություն չի մտցրել Ազատության աջակցության օրենքի 907 հոդվածում, տեղեկացնում է հաղորդագրությունը, ինչը նշանակում է, որ շարունակվելու է արգելվել Ադրբեջանի կառավարությանն անմիջական օգնության տրամադրումը, քանի դեռ Մ. Նահանգների նախագահը չի հավաստիացրել, որ Ադրբեջանը կատարել է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը վերացնելու ուղղությամբ լուրջ քայլեր: Այնուամենայնիվ, ըստ հաղորդագրության, 907 հոդվածը չի խոչընդոտում Ադրբեջանի ժողովրդին ուղղված օգնությունը: Առայսօր Մ. Նահանգները ավելի քան 130 մլն դոլարի նմանօրինակ օգնություն է տրամադրել Ադրբեջանին:

Միաժամանակ, Սենատը հատատեց 740 մլն դոլարի չափով օգնության հատկացումը նորաստեղծ անկախ երկրներին: Դրանից 210 միլիոնը կտրամադրվի Ուկրաինային, տնտեսական բարեփոխումները շարունակելու համար: Վրաստանին տրամադրվելու է 95 մլն դոլար:

Ինչ վերաբերում է նույն օրինագծի Ներկայացուցիչների պալատի տարբերակին, այնտեղ նախատեսվում է Հարավային Կովկասին հատկացվելիք օգնության ողջ փաթեթի մոտ 4 տոկոսը հատկացնել Լեռնային Ղարաբաղին, իսկ Հայաստանին՝ առնվազն 25 տոկոսը: Ներկայացուցիչների պալատի տարբերակում, որը քննարկվելու է սեպտեմբերի 10-ին, նույնպես պահպանվում է 907 հոդվածը:

Մինչ նախագահ Բիլ Քլինթոնի հաստատմանը ներկայացվելը, Սենատի քվեարկած եւ Ներկայացուցիչների պալատի քննարկվելիք տարբերակների միջեւ առկա հակասությունները կհամաձայնեցվեն Կոնգրեսի 2 պալատների համատեղ նիստում, որ կկայանա առաջիկա շաբաթներին:

Մեր կողմից ավելացնենք, որ Հայաստանի ամերիկյան համալսարանին հատկացված 10 մլն դոլարը կկազմի անձեռնմխելի հիմնադրամ, որի տոկոսները կհատկացվեն համալսարանի տարեկան կարիքներին:

Ո՞վ է տնօրինելու Երեւանի հինգ խոշոր շուկաները

Տնօրենների պնդմամբ՝ Երեւանի երկու խոշոր շուկաների վաճառք իրականում չի եղել

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՅԱՆ

«Ազգը» սեպտեմբերի 2-ին տպագրել էր Արմենպրեսի տեղեկատվությունը, որ վերջերս վաճառվել են Երեւանի երկու խոշոր՝ Ծածկած եւ ԳՈՒՄ-ի շուկաները: Վերջիններիս տնօրենները, այցելելով խմբագրություն, հայտնեցին, որ այդ վաճառքը Հայկոոպի կամ որ նույնն է՝ Սպառողական ընկերությունների միության կողմից անօրինական է, չունի իրավաբանական հիմնավորում, կատարվել է կասկածելի պայմաններում:

Արմենպրեսի վերոհիշյալ տեղեկատվության մեջ մասնավորապես նշվում էր, որ շուկաների «հազվագյուտ գնորդը» «Մարկոսորգ» ՍՊԸ հայկական ֆիրման է, որը օբյեկտների համար համապատասխանաբար երկու ամսվա ընթացքում վճարելու է 3 եւ 2 մլն դոլար: Վերոհիշյալ երկու շուկաների տնօրենների պնդմամբ՝ շուկաների վաճառքը անօրինական է, քանի որ մինչեւ օրս ճշված չէ, թե ո՞ւմ են պատկանում շուկաները, հստակորեն կարգավորված չէ վաճառքի իրավական կողմը, եւ վերջապես՝ կատարվել է սխալ գնահատում: Պարզապես, ըստ նրանց, Հայաստանի սպառողական ընկերությունների միությունը (Հայկոոպ) արել է ձեռքից եկած ամեն ինչ, որպեսզի շուկաները վաճառվեն հատկապես «Մարկոսորգ»-ին եւ ուրիշ ոչ մեկին: Իսկ վերջինս ոչ թե հայկական ֆիրմա է, ինչպես նշված է տեղեկատվության մեջ, այլ մոսկովյան «Ստրելենկա» կորպորացիայի համատեղ ձեռնարկություններից մեկը: Տեղեկացվեց, որ եւս երեք շուկաների՝ Երրորդ մասի, Արաբկիրի եւ Նորքի զանգվածի, վաճառքի շուրջ եւս բանակցություններ են ընթանում եւ ըստ ամենայնի, այդ նույն կարգով կգնվեն «Մարկոսորգի» կողմից: Տեղեկացվեց, որ «Մարկոսորգ» ՍՊԸ-ն հիմնել է «Ստրելենկա»-ի նախագահ, մոսկվաբնակ մեծահարուստ Լեւոն Հովհաննիսյանը իր դասընկերոջ՝ Վլադ Իսպիրյանի հետ, որը «Սոնումենտի վերերոկի տերն» է: Հարց է առաջանում, ինչո՞ւ հատկապես «Մարկոսորգ»-ին: «Բյուջեն լցնելու խնդիր է, իսկ մինչեւ օրս դեռ ոչ մի գումար չի ստացվել», ասացին «Ազգի» այցելուները: Տնօրենների տված տեղեկությունները ներկայացնում ենք որպես զուտ ինֆորմացիա՝ մտորելու համար:

Տես էջ 2

Չեռնոմիրդինը հրաժարվելու միտք չունի

ՄՈՍԿՎԱ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի վարչապետի պաշտոնակատար Վիկտոր Չեռնոմիրդինն այսօր կտրականապես մերժեց երկրի կառավարության նախագահի պաշտոնից կամովին հրաժարվելու Պետդումայի պատգավորների առաջարկությունը: Ռուսաստանի խորհրդարանի ստորին պալատի պատգամավորները նրան ուղղված համապատասխան դիմումն ընդունել էին նախօրյակին՝ սեպտեմբերի 2-ին:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, բացելով կառավարության նիստը, նա ընդգծեց, որ «ոչ խղճի մտոք, ոչ էլ ըստ գործի էության, ես նման անպատասխանատու որոշման չեմ դիմի»: Վիկտոր Չեռնոմիրդինը նշեց, թե «ես ուրիշ երկիր եւ ճակատագիր չունեմ, իմ երեխաներն ու թոռներն ապրելու են այստեղ՝ Ռուսաստանում»:

Նա խոստովանեց, որ «դժվար էր համաձայնել» վարչապետի պաշտոնը վերստին զբաղեցնելու նախագահի առաջարկությանը: Բայց դա արեց, քանի որ հասկացավ, որ երկիրը պետք է դուրս բերել ճգնաժամից:

Անդրադառնալով իր հասցեին ուղղված այսպես կոչված «նախագահական հավակնություններ»ին մասին մեղադրանքներին, Վիկտոր Չեռնոմիրդինն ասաց. «Կուզենայի տեսնել այն խենթին, որը վարչապետի պաշտոնը լավ մեկնաբանում է համարում նախագահական ընտրությունների համար»:

Վիկտոր Չեռնոմիրդինն այն համոզմունքը հայտնեց, որ «մեզանում հնարավորություն կա ստեղծելու ներկայիս ճգնաժամային կացությունը»:

Դրա հետ մեկտեղ նա ընդգծեց, որ այն հինգ ամսվա ընթացքում, երբ ինքը կառավարության մեջ չէր, երկրում սոցիալ-տնտեսական կացությունը խիստ սրվել է: «Պարզապես փոշեղվում ես, երբ տեսնում ես, թե ինչ է տեղի ունեցել այդ հինգ ամսվա ընթացքում», ընդգծեց նա:

ՕՏԱՐ ՍԱՄՈՒԷԼ

Նախկին շաղկապուրծի չափսերը վերցնելիս

Հայաստանում տարբեր ասպարեզներում կատարած իր ներդրումներով հայտնի լոնդոնահայ գործարար Վայլե Մանուկյանի մասին պատմող այս նյութը, որն ստորագրվել է Ֆրանկ Ֆիտցպատրիկի կողմից «The Inquirer» թերթի օգոստոսի 31-ի համարում, հետաքրքրաշարժ է բազմաթիվ առումներով:



Անգլիացի գրող Ջեյմս Բարթոլոմյուն տարիներ շարունակ ուսումնասիրում էր 1987-ին հրատարակված իր գրքի նյութը: Գիրքը պատմում է աշխարհի ամենահարուստ մարդու՝ Բրունեյի սուլթանի մասին, որն ապրում էր 1788 սենյականոց մի պալատի մեջ եւ ուներ 500-ից ավելի սեփական շքեղ ավտոմեքենաներ:

Բարթոլոմյուն ակնկալում էր, որ գիրքը սուլթանի հետաքրքրությունը կառաջացնի, եւ անակնկալի չեկավ, երբ երկու մասնավոր խուզարկուներ հեռաձայնեցին իրեն: Նրանց հարցերը հիմնականում վերաբերում էին սուլթանի անմիջականորեն մոտիկ շրջանակի մարդկանցից մեկին, այն շրջանակի, որի մեջ մտնում էին Մոհամեդ էլ Ֆայեդը՝ լոնդոնյան Հարոդս հանրախանութի տերը եւ լեդի Դիանայի հետ ավտովթարում մահացած Դոդիի հայրը, Աղնաս Խաշոգգին՝ սաուդյան զենքի վաճառականը, եւ հինգու մի խորհրդավոր անձնավորություն: Նրա անունը Վայլե Մանուկյան էր, եւ ինչպես խուզարկուները խոստովանեցին, չափազանց դժվար էր նրա մասին որեւէ տեղեկություն գտնելը:

Այս դեպքից երեք տարի անց, փենսիլվանացի (ԱՄՆ) պատասխանատուները չկարողացան շատ բան իմանալ «Բոբ» Մանուկյանի մասին, երբ վերջինս հակայական գումար ներդրեց գնելու «Ֆիլադելֆիա պարկ» մրցման հրապարակը: Նա մնաց անհայտ մինչեւ որ վերջերս Լոնդոնում իր եղբոր հետ դատի տվեց սուլթանի եղբորը՝ իշխան Ջեֆրի Բոլկիային: Դատարանում վերջինիս հակահարձակման ընթացքում էր, որ երեւան եկան որոշ մանրամասնություններ նրանց ձեռնարկությունների վերաբերյալ:

Տես էջ 8

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՈՐԹԱԳԻԿ

ՎԻՃԱՍԱՐՈՒՅՑ

Ո՞վ է տնօրինելու Երեւանի հինգ խոշոր շուկաները

Սկիզբը էջ 1

Պարզվում է, որ շուկաների վաճառքի գործընթացը սկսվել է դեռեւս օգոստոսի սկզբին, որի մասին շուկաների կոլեկտիվները տեղեկացել են միայն թերթերից: Այն ժամանակ միության նախագահ Ռ. Բագոյանի կողմից տնօրեններին ուղարկվել է մի շրջաբերական, ըստ որի միության կողմից շուկաները գնելու պատրաստակամ կոլեկտիվներին առաջարկվել են վաճառքի այնպիսի պայմաններ, որ կոլեկտիվները հրաժարվեն սեփականաշնորհմանը մասնակցելուց. պահանջվել է մեկ շաբաթում վճարել գնահատված արժեքի 5 տոկոսը, մյուս երկու շաբաթում՝ 30 տոկոսը, իսկ մինչեւ սեպտեմբերի 15-ը՝ 100 տոկոսը: Ընդ որում առաջին երկրորդ մուծումները կատարելու եւ երրորդը չհասցնելու դեպքում, գումարները չփոխի վերադարձվեին եւ շուկաների կոլեկտիվները զրկվում էին սեփականաշնորհմանը մասնակցելու իրավունքից: Մինչդեռ, դարձյալ նույն աղբյուրի պնդմամբ, «Մարկոսորգի» նկատմամբ կիրառվել է զեղչերի համակարգ. վերջինիս առաջարկվել է վճարել գումարի 50 տոկոսը եւ դառնալ օբյեկտների ժամանակավոր սեփականատեր, իսկ մնացած մուծումները կատարել հետագայում: «Արտուրդ է, որ շուկաների կոլեկտիվները զրկված են վաճառքին մասնակցելու իրավունքից», բողոքում էին տնօրենները: Իսկ Հայկոոպի այն փաստարկը, թե վաճառելով դրսի ներդնողին, Հայաստան մեծ քանակությամբ փող կգա (մոտ 10 մլն դոլար), ճիշտ չէ, քանի որ, ըստ տնօրենների, այդ փողը կարճ ժամանակում մի քանի անգամ մեծացած կհոսի Հայաստանից դուրս: Եթե կա բյուջեն լցնելու խնդիր, ապա, շուկաները վարձակալությամբ կոլեկտիվի անդամներին հանձնելով, ժամանակի ընթացքում ավելի մեծ գումարներ կհատկացվեն պետբյուջեին, քան միանվագ վաճառքի դեպքում: Ըստ տնօրենների, կա մի վտանգ եւս՝ կստեղծվի կենտրոնական շուկաները տնօրինող մոնոպոլիա, որը ցանկացած ձեւով կարող է ներազդել գյուղմթերքների գների վրա:

Տեղեկացվեց նաեւ, որ «անօրինական վաճառքի» մասին հատուկ դիմումով ու ճամակով վերոհիշյալ երկու եւ նրանց միացած երեք շուկաների տնօրենները դիմել են ՀՀ նախագահին, ԱԺ, կառավարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, սակայն մինչեւ օրս իրենց բողոքներին ընթացք չի տրվել: Վեր մնալով ամեն տեսակի ենթադրություններից, սակայն հիմք ընդունելով մեզ հասած այս ողջ ինֆորմացիան, ակամա ծագում են մի քանի պատասխան պահանջող հարցեր՝ այնուամենայնիվ, ինչո՞ւ է ԱԸՄ-ն շահագրգռված շուկաները «Մարկոսորգին» վաճառելու մեջ, ինչո՞ւ են *անորոշ* առուվաճառքն իրականացնող կողմերի միջեւ կնքված պայմանագրերը, ինչո՞վ բացատրել համապատասխան մարմինների կողմից վերոհիշյալ վիճահարույց խնդրի նկատմամբ անտարբերությունը:

Ի դեպ

Ձերծ մնալով ավելորդ ենթադրություններից, ներկայացնում ենք «Ազգ»-ի տեղեկանքը «Ստրեսենկա»-ի մասին՝ հաղված տարբեր ժամանակների տեղեկատվություններից: Նախ՝ կորպորացիայի նախագահ Լ. Հովհաննիսյանը ներկայումս Մոսկվայի հայտնի հայազգի հարուստներից մեկն է, հայտնի է նաեւ իր բարեգործություններով եւ հաճախակի է այցելում Հայաստան: «Ստրեսենկա»-ի նախագահը Հայաստան էր այցելել այս տարվա մարտի կեսերին, երբ սկսվել էր նախագահական ընտրությունների երկրորդ փուլը. այն ժամանակ նրա հետ ազդեցիկ գործարարների Հայաստան գալը համարվեց «տղամարդու քայլ»: Մեկ այլ պատասխանական տեղեկատվության համաձայն, «Ստրեսենկա»-ի ներկայացուցիչներին հուլիսի կեսերին ընդունել է ՀՀ նախագահը: Հանդիպմանը ներկայացվել են ներդրումային ծրագրեր՝ նավթավերամշակման, Երեւանի կենտրոնում խոշոր առեւտրի կենտրոններ բացելու եւ գյուղմթերքների վերամշակման ոլորտների վերաբերյալ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հայաստանն ունի ռազմական կցորդ ԱՄՆ-ում

Հայկ Քոթանջյանը գնդապետ է, դոկտոր, ակադեմիկոս



Հայաստանի պաշտպանության նախարարի հրամանով ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության ռազմական կցորդ է նշանակվել գնդապետ Հայկ Քոթանջյանը: ՀՀ նախագահի սեպտեմբերի 2-ի հրամանագրով նրան շնորհվել է արտակարգ դեսպանորդ եւ լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան:

Գնդապետ Հայկ Քոթանջյանը ծնվել է 1945 թ. Լենինական քաղաքում ծառայողի ընտանիքում: Միջնակարգ դպրոցից բացի, որն ավարտել է արծաթե մեդալով, ավարտել է (գերազանցությամբ) Լենինականի Ս. Մերկուրովի անվան գեղարվեստական ուսումնարանը, 1965-66 թթ. ուսանել է Ա. Պոպովի անվան ռազմածովային ուսումնարանում, գերազանցությամբ ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը, Մոսկվայի բարձրագույն կուսակցական դպրոցը, ԽՄԿԿ կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան, կառավարման ռուսաստանյան ակադեմիայի դոկտորանտուրան: Քաղաքական գիտությունների դոկտոր է, ՌԴ ռազմական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: 1968-73 թթ. վարել է կոմերիսական ղեկավար պաշտոններ, 1973-75 թթ. աշխատել է ՀամԼԿԵՄ կենտկոմում, 1975-78 թթ.՝ Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմի առաջին քարտուղար, ՀԿԿ կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու: Ասպիրանտուրան ավարտելուց հետո եղել է ՀԿԿ կենտկոմի գիտության եւ ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի տեղակալ, 1985-87 թթ.՝ Հայկական ԽՍՀ պրոֆեսիոնալների պետական կոմիտեի նախագահ, 1987-88 թթ.՝ ՀԿԿ Հրազդանի շրջկոմի առաջին քարտուղար: 1982-83 թթ. կուսակցական գծով մեկնել է Քաբուլ, եղել Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության կենտկոմի խորհրդական եւ կենտկոմի աշխատակազմի կուսկոմիտեի խորհրդատու: Այդ գործուղման համար պարգեւատրվել է պատվո մարտական հրազենով եւ մեդալներով: 1988-90 թթ.՝ ՀԿԿ կենտկոմի քարտուղարությանն առընթեր տեսուչ: 1987 թ. հուլիսին ՀԿԿ կենտկոմի պլենումում ելույթ է ունեցել կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի խստագույն քննադատությամբ:

Հակամարտությունների հիմնահարցերին նվիրված դոկտորանտուրայից հետո նշանակվել է Հայաստանի պաշտպանության նախարարության ռազմական քաղաքականության բաժնի պետ: Այնուհետեւ եղել է «Հայք» գիտահետազոտական հաստատության փորձագետ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի դեպարտամենտի տնօրեն: Հետագայում կրկին նշանակվել է աշխատանքի ՀՀ պաշտպանության նախարարությունում որպես արտաքին կապերի եւ միջազգային համագործակցության վարչության պետ: 1995 թվականից «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է: 1975-80 եւ 1985-90 թթ. եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Ամուսնացած է, ունի երկու որդի: Մի շարք գրքերի եւ բազմաթիվ հոդվածների հեղինակ է, որոնցից մի քանիսը տպվել է «Ազգ» թերթում:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ

ՀԱՍԱՐՈՍ

Ուրուգվայի խորհրդարանական պատվիրակությունը Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեպտեմբերի 4-5-ը պաշտոնական այցով Հայաստանում կգտնվի Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության Գլխավոր վեհաժողովի Ներկայացուցիչների պալատի նախագահ Խայմե Սարիո Տրոբոյի գլխավորած խորհրդարանական պատվիրակությունը: Ինչպես հայտնեցին ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչությունից, այցի շրջանակներում նախատեսվում են հանդիպումներ ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի, ՀՀ վարչապետի, արտգործնախարարի, ինչպես նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ի հետ, որոնց ընթացքում կքննարկվեն երկու երկրների միջեւ միջպետական, միջխորհրդարանական համագործակցության հետագա զարգացմանն առնչվող հարցեր: Ի դեպ, 1996 թվականին Ազգային ժողովում ստեղծվել է հայ-ուրուգվայական բարեկամության խորհրդարանական խումբ, իսկ հետագայում նմանատիպ խումբ է ստեղծվել նաեւ Ուրուգվայի խորհրդարանում: Ուրուգվայի Արեւելյան Հանրապետությունն առաջինն է, որ պաշտոնապես ճանաչել է 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունը:

Խնձորուտի ջրամբարի պատվարը փլուզման վտանգի տակ է

ՏԱՎՈՒՇ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Տավուշի Խնձորուտ գետի վրա կառուցված 4մլն խմ տարողությամբ եւ արդեն 23 տարի շահագործվող ջրամբարի ջրթող թունելը վթարային վիճակում է: Թեեւ ջրթող համակարգի գործարկմամբ ջրամբարի մակարդակը փոքր-ինչ իջել է, սակայն առկա է պատվարի փլուզման վտանգ, որը սպառնում է Այգեձոր գյուղի գետափնյա թաղամասերին: ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կողմից ստեղծվել է մասնագիտական հանձնաժողով:

Սեւանում ձկան պաշարները կավելանան

ԵՐԵՎԱՆ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վերստին սկսեց գործել Սեւանի ՀԷԿ-ի ձկնաթափանցիկ կառույցը, որը մանրաձկներին թույլ չի տա լճից ջրի բացթողումների ժամանակ լցվելու Հրազդան գետ: ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական Նորայր Փահլեւանյանն ասաց, որ դրա շնորհիվ Սեւանում մանրաձկների քանակը մոտավորապես 80 տոկոսով կպահպանվի եւ ձկան պաշարները կավելանան:

Կառավարությունը խնդրատում է ԿԲ փորձարարությունը

Սկիզբը էջ 1

Չորեքշաբթի Ներսես Երիցյանը, անդրադառնալով ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակը, փաստեց, որ մեր ՊԿՊ-ների շուկայում որոշակի տեղաշարժեր են կատարվում, մի շարք ներդնողներ դուրս են եկել՝ հրաժարվելով իրենց գումարները ներդնել ՊԿՊ-ներում, թեեւ ռուսական ճգնաժամի առաջին իսկ օրերից ցայժմ տեղի ունեցած 10 սակարկություններում ՊԿՊ-ների եկամտաբերության տոկոսադրույքներ չեն փոփոխվել՝ 41-33,4 տոկոս՝ կախված ներդրման ժամկետներից: Անփոփոխ է մնացել նաեւ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ մերձակա երկու շաբաթվա ընթացքում կազմելու է 33 տոկոս: Կտրուկ նվազել է միջբանկային շրջանառության ծավալը: Մինչ ճգնաժամը միջբանկային շրջանառությունը հասնում էր մինչեւ 30 մլն դոլարի: Այնինչ ներկայումս այս շրջանառության ծավալները նվազել են մինչեւ 3 մլն դոլար եւ օրեցօր շարունակում են կրճատվել: Հայաստանյան ֆինանսական շուկայում ակնհայտ անառողջ սպասումներ են՝ դոլարի պահանջարկն աճում է, իսկ առաջարկ չկա: ԿԲ-ն վճռականորեն հայտարարում է, թե ինքը, տնօրինելով ոսկու արժութային լուրջ պահուստներ, 50 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 45-46 մլրդ դրամի փոխարեն, չի ֆիքսելու կուրսը: Եվ իր պահուստներից ոչ մեկ ցենտ չի ուղղելու ֆինանսական շուկա՝ դրամի արժեզրկումը զսպելու համար: Այս քաղաքականությունը Ներսես Երիցյանը բնորոշեց իբրեւ քամուն հակառակ չգնալու ուղեգիծ, կամ՝ «Հայաստանը Ռուսաստան չէ»: Ունենալով 10-12 մլն դոլարով ավելի պահուստ, քան նախատեսված է, ԿԲ-ն շարունակում է արտարժութային պահուստները շուկա չհանել: 1998 թ. տարեսկզբից մինչ այսօր արժութային ինտերվենցիաները կազմել են 12 մլն դոլար, որից 10-11 միայն առաջին եռամսյակում: Վերջին ամիսներին ԿԲ-ն միայն գնել է: Ըստ կառավարության՝ ԿԲ-ն հույսեր ուներ, թե տարադրամի շուկայում որոշ կառույցներ շուտով իրենց պահուստների էական մասը վաճառքի կհանեն, ուստի սահմանել էր իրականից ակնհայտորեն ցածր փոխարժեք գնման համար, իսկ վաճառքի համար՝ բարձր, կամ. «Դոլար ե՞ք ուզում, դոլար լիքն է, բայց 520-ով, 525-ով...»: Այդ կառույցները մինչ այսօր այդպես էլ իրենց դոլարները վաճառքի չեն հանում, եւ այդ քայլը տրամաբանված է, եթե պետությունը գլանում է, ապա ինչու իրենք պետք է առաջինը լինեն: ԿԲ-ում դրամի արժեզրկումը բացատրվում է «մանր սղեկուլացիաներով», որ կատարում են ներմուծողները, Ներսես Երիցյանի բնորոշմամբ՝ «1-2 LM ներմուծող կամ բանան ներկրող»: Տպավորիչ, բայց միամիտ ընբռնում է մեր ֆինանսական շուկայում ծեւավորվող միտումների:

Ո՞վ է գնում քամուն հակառակ

Դրամի արժեզկումը անտարբեր չթողեց մեր պետական արժեթղթերի շուկայում ներդրումներ կատարողներին, ինչպես նաեւ բանկային համակարգում գործառնություններ իրականացնողներին: Դրամ-դոլար առաջարկ-պահանջարկի հարաբերակցությունը ձեւախեղվում է: Եթե ներկայիս միտումները եւ դրամի արժեզրկումը պահպանվեն, ՊԿՊ-ների շուկայից կարող են հեռանալ շատերը, իսկ մեր պետբյուջեի պակասուրդը փակելու առայժմ միակ հուսալի աղբյուրը այս շուկան է: Արտասահմանյան շնորհները ուշանում են: 1997 թ.-ի համեմատ՝ մեր ՊԿՊ-ների շուկայում ոչ ռեզիդենտների տոկոսը 60-ից իջել է 20-ի: Միով բանիվ, ճգնաժամային կծիկի թելերը ձգվում են դեպի մեր ՊԿՊ-ների շուկան եւ ԿԲ վերահսկողական թուլացող գործառույթը, ԿԲ խորհուրդը հրապարակավ շեշտեց. «Ուզում ենք շուկան մի անգամ ինքն իրեն դրսեւորի՝ առանց ԿԲ: Քամուն հակառակ չգնանք, քամուն հակառակ գնալը ոչ մեկին օգուտ չի բերում»: Իսկ կառավարությունն արդեն մտահոգվում է՝ հրաշալի գիտակցելով, որ թե Հայաստանում, թե նրանից դուրս շատերն են անհամբեր սպասում դրամի արժեզրկմանը: Եթե սպասումները խորանան՝ վերածվելով տագնապի կամ խուճապի, ապա ԿԲ 10-12 մլն դոլարի ինտերվենցիան էլ չի օգնի կասեցնելու ազգային դրամի անկումը: Այսօրվա 4-5 միլիոնը կարող է ավելի մեծ եւ կարգավորիչ ազդեցություն ունենալ, քան վաղվա 10-15-ը: Հետեւաբար պետք է համատեղ՝ ԿԲ-կառավարություն ճշտել, ո՞ր ուղղությամբ է փչում քամին, եւ ո՞վ է գնում նրան հակառակ՝ գուցե կենտրոնական բա՞նկը... Սպառողական շուկայում ապրանքների գները բարձրանում են, իսկ Ռուսաստանից՝ իբրեւ սոցիալական տրանսֆերտ, Հայաստան ներհոսող դոլարները՝ նվազում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակչության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՄԱՅՐՈՒՂԻ

Հայ ժողովրդի 2 հատվածներ միացվեցին 3-րդ հատվածի գումարներով

Մեր երեկվա համարում տպագրել էինք Արմենպրեսի տեղեկատվությունը Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղու Գորիս-Շուշի ճանապարհի վերջին հատվածների բացման մասին: Նկատի ունենալով տեղեկատվության որոշ անճշտությունները, հրատարակում ենք «Հայաստան» համահայկական հիմնադրամից երեկ ստացված հաղորդագրությունը, որ բովանդակում է նաեւ նոր մանրամասներ:

Սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղու 4-րդ եւ 5-րդ հատվածների բացումը: Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը միմյանց կապող «Գորիս-Ստեփանակերտ» ավտոճանապարհի շինարարությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեության վերջին երեք տարիների գլխավոր ծրագիրն էր: Հայության տարբեր հատվածների ակտիվ մասնակցության շնորհիվ եւ մասնավորապես նը մասնակցեց, բացելով ավտոմայրուղու Գորիս-Շուշի հատվածը, որը ընդհանուր ճանապարհի մոտ 85 տոկոսն է՝ 55 կմ երկարությամբ: Միաժամանակ նախագահ Ռոբերտ Քոչարյանը կարեւորեց մեկ այլ խնդիր՝ Ղարաբաղի հարավն ու հյուսիսը միացնող մայրուղու կառուցման անհրաժեշտությունը: Հանրապետության վարչապետ Արմեն Դարբինյանի, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի, պետական այլ ղեկավարների հետ պարոն Քոչարյանը ժամանել էր Լեռնային Ղարաբաղ մասնակցելու այս ավտոճանապարհի բացման հանդիսավոր արարողությանը: Սահմանին նրանց միացան ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Օլեգ Եսայանը, ԼՂՀ վարչապետ Ժիրայր Պողոսյանը:

Այս օրը՝ պայծառ ու գեղեցիկ, մարմնավորում է հայ ժողովրդի ներուժի եւ կարողությունների իրականացումը, աշխարհի հայության նյութական, հոգեւոր, կազմակերպական ներդրման հնարավորությունները, ասաց «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Ռաֆֆի Հովհաննիսյանը: Դա ցույց է տալիս, որ մեր ժողովուրդը, ի հեճուկս բոլոր դժվարությունների, անհավասար պայմանների, կարողանում է դնել խնդիրներ եւ լուծել դրանք, նշեց նա:

Ճանապարհը կլինի Լեռնային Ղարաբաղի տնտեսական զարգացման հզոր խթան, ասաց ԼՂՀ վարչապետ Ժիրայր Պողոսյանը: Հայ առաքելական եկեղեցու օրհնությունը բերեց Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ եպս. Մարտիրոսյանը:



Կալիֆորնիայում կազմակերպված հեռուստամարաթոնի մասնակիցների միջոցներով հնարավոր եղավ Լաչինի դժվարանցանելի ճանապարհը դարձնել լայնահուն եւ անվտանգ մայրուղի: Սա ըստ կարեւոր իրադարձություն է. այս ճանապարհով փաստորեն միացվում են աշխարհի երկու հայկական պետությունները: Հայ ժողովրդի երկու հատված միացվեցին՝ երրորդ հատվածի գումարներով, այս խորհրդանիշը Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը ժամանել էր Լեռնային Ղարաբաղ մասնակցելու այս ավտոճանապարհի բացման հանդիսավոր արարողությանը: Սահմանին նրանց միացան ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Օլեգ Եսայանը, ԼՂՀ վարչապետ Ժիրայր Պողոսյանը:

Այս օրը՝ պայծառ ու գեղեցիկ, մարմնավորում է հայ ժողովրդի ներուժի եւ կարողությունների իրականացումը, աշխարհի հայության նյութական, հոգեւոր, կազմակերպական ներդրման հնարավորությունները, ասաց «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Ռաֆֆի Հովհաննիսյանը: Դա ցույց է տալիս, որ մեր ժողովուրդը, ի հեճուկս բոլոր դժվարությունների, անհավասար պայմանների, կարողանում է դնել խնդիրներ եւ լուծել դրանք, նշեց նա:

Ճանապարհը կլինի Լեռնային Ղարաբաղի տնտեսական զարգացման հզոր խթան, ասաց ԼՂՀ վարչապետ Ժիրայր Պողոսյանը: Հայ առաքելական եկեղեցու օրհնությունը բերեց Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ եպս. Մարտիրոսյանը:

1995 թ. ապրիլին սկսած ավտոմայրուղու կառուցումը հնարավոր դարձնելու համար ծախսվել է մոտ 2.251.000 խմ հող: Իրականացվել է ասֆալտ-բետոնե ծածկ մոտ 450.000 քմ մակերեսով, տեղադրվել են 123 հատ տարբեր տրամագծերի ջրահեռացման խողովակներ, շուրջ 484 տարբեր նշանակություն ունեցող ճանապարհային նշաններ:

Ճանապարհն ամբողջությամբ շահագործման կհանձնվի 1999 թ., երբ կնորոգվի ավտոմայրուղու վերջին Շուշի-Ստեփանակերտ հատվածը: Արդեն պատրաստ է Շուշի-Ստեփանակերտ հատվածի նախագիծը, շինարարությունը կսկսվի այդ հատվածի համար անհրաժեշտ գումարի առկայության դեպքում:

Ծրագրին նպաստակային ձեւով հատկացված է 8.848.310,24 ԱՄՆ դոլար (ճանապարհի Գորիս-Շուշի հինգ հատվածների շինարարության համար կնքված էին պայմանագրեր՝ 8.806.192,52 դոլարի ընդհանուր արժեքով), իսկ ամբողջ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 11 մլն դոլար:

ԱՌՈՒՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Հիմնադրամի հանրային կապերի բաժին

ՇՈՒՐՋԵՐ

Ցանկալին որպես իրողություն ներկայացնելու ադրբեջանցի լրագրողների փորձերը

«Ազգի» նախորդ համարում, որպես մասնակից, անդրադառնալով «Աջակցություն Անդրկովկասի ՁԼՄ-ներին» ծրագրով անցկացված համաժողովին, կարծիք էինք հայտնել, որ շնորհիվ դրա ադրբեջանցի լրագրողները Ստեփանակերտում հանդիպեցին հայ լրագրողներին: Որեւէ հույս կապել այդ հանդիպման հետ հազիվ թե ճիշտ լիներ: Բայց որ դա երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ մտքեր փոխանակելու եւ միմյանց տեսակետներին մոտիկից ծանոթանալու առումով օգտակար էր, անժխտելի է:

Հանդիպումներում ադրբեջանցի լրագրողներն անընդմեջ փորձում էին մեզ համոզել, թե Հայաստանում կանգ է առել տնտեսական գործունեությունը, առեւտուրը լճացել է, տիրում է համատարած աղքատություն, ինչի հետեւանքով բնակչության առնվազն կեսը թողել եւ հեռացել է հանրապետությունից: Նրանց կարծիքով, Բաքվի հետ համեմատած՝ երեւանի խանութներում ապրանքների տեսականին խիստ սահմանափակ է, իսպառ բացակայում է ժողովրդի բարեկեցության հեռանկարը: Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին ադրբեջանցի լրագրողների «հետեւությունները» ավելի քան մռայլ էին: Հետեւությունների մռայլությունը թերեւս պայմանավորված էր ցանկալին մեզ որպես իրողություն հրամցնելու իրենց իսկ միտումներով, որոնք միանշանակ «հիմնավորվում» էին ղարաբաղյան հակամարտությամբ:

Համանման մոտեցման դեպքում, ի տարբերություն Հայաստանի, առավել եւս Լեռնային Ղարաբաղի հանրապետության, Ադրբեջանը իբր ծաղկում է, շինարարական համատարած աշխատանքներ են կատարվում հանրապետությունում եւ օրըստօրե բարելավվում է բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Բացի այս ամենից նավթի հարուստ պաշարների մոտալուտ շահագործումը, ադրբեջանցի լրագրողները, խոսքերով, ոչ միայն բարգավաճում է խոստանում Ադրբեջանին, այլեւ առաջնորդում է վերջինի ռազմական գերազանցությունը հայերի նկատմամբ: Այս տեսակետն ինքնօրինակ չէ, մինչ ադրբեջանցի լրագրողները բազմիցս առաջ է քաշվել ամերիկյան սենատորների կամ արեւմտյան գործիչների կողմից, որպեսզի փոխզիջման անվան տակ Հայաստանին պարտադրեն միակողմանի զիջում: Պարզապես տարբերությունն այն է, որ սենատորներն ու գործիչները, եթե հասկանում են Ադրբեջանի նավթային պաշարների շահագործման անհամատեղելիությունը կովկասում այնպիսի թեժ կետերի առկայության հետ, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղը, Աբխազիան, Չեչնիան, ապա ադրբեջանցի լրագրողները կամայականորեն շրջանցում էին այս իրողությունը:

Մեր կողմից փորձ արվեց Ադրբեջանի նավթային պաշարների շահագործումը պայմանավորել կովկասյան հակամարտությունների, առավելապես ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմամբ եւ առանձին զույցներում ադրբեջանցի լրագրողին ուղղվեց հետեւյալ հարցը. «Լեռնային Ղարաբաղը ընդամենը 4500 քառ. կմ տարածով փոքրիկ երկիր է, ընդերքում որեւէ հարստություն էլ չունի: Իսկ Ադրբեջանի հարստությունները ղարաբաղյան հակամարտության պատճառով կոնսերվացվում են եւ հայտնի չէ, թե երբ կշահագործվեն: Ելնելով Ադրբեջանի բարգավաճման հեռանկարից, նպատակահարմար չէ՞ր լինի հաշտվել իրողության հետ եւ ճանաչել սատուս քվոն»: Ադրբեջանցի լրագրողն այդ հարցին ուշագրավ պատասխան տվեց. «Հայերի հավակնությունները ոչ Լեռնային Ղարաբաղով չեն սահմանափակվում, դուք պահանջատիրական հավակնություններ եք ցուցաբերում նաեւ Նախիջեւանի նկատմամբ»: «Ի՞նչ եք կարծում, եթե ձեզ տվեին համապատասխան երաշխիքներ...» հարցին ի պատասխան ասվեց. «Երաշխիքներն զգալիորեն կդյուրացնեին ղարաբաղյան հարցի լուծումը»:

Լեռնային Ղարաբաղի հարցն, ինչ խոսք, բարդ հարց է: Ոչ պակաս բարդություն են ներկայացնում նաեւ Ադրբեջանի նավթային պաշարների շահագործման, տարածաշրջանային համագործակցությունների ձեւավորման եւ առավել եւս անդրկովկասյան հանրապետությունների ինտեգրացման խնդիրները: Հատկապես այն դեպքում, երբ դրանք միջազգային ուժերի կողմից ներքաշվում են ազդեցության գոտիների համար ծավալվող անհաշտ պայքարի ոլորտ: Ղարաբաղյան հիմնահարցն ու նշված խնդիրներն, իհարկե, իրենց կնիքը թողեցին հայ եւ ադրբեջանցի լրագրողների հանդիպման վրա: Բայցեւայնպես հանդիպումը կայացավ, քանի որ վերջիններս «Աջակցություն Անդրկովկասի ՁԼՄ-ներին» ծրագրով անցկացված համաժողովի շրջանակներում կարողացան մտքեր փոխանակել: Դեռ ավելին, համաժողովն անցկացվեց ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում: Այս ամենը, համաժողովի կազմակերպումը դրականորեն գնահատելու, հայ եւ ադրբեջանցի լրագրողների ստեփանակերտյան հանդիպումը հաջողված համարելու բավարար հիմքեր է տալիս:

ՀԱԿՈԲ ՇԱՔԲՅԱՆ

Էժան հեգնանքը չի փրկում

«Առավոտի» սեպտեմբերի 3-ի համարում «Մ. Կարինյան» ստորագրությամբ եւ «Ի խորոց սրտի» հավելումով լույս է տեսել «Քաղաքական պարզունակություն» խորագրով մի հոդված, ուր մահացու մեղքեր են վերագրված նաեւ ինձ՝ «Ազգի» հանդես քաղաքական մեկնաբանիս: Հարկադրված եմ իրոք ի խորոց սրտի փաստել, որ ընդդիմախոսիս ինքնությունն ինձ (եւ հավանաբար՝ նաեւ ընթերցող լայն հասարակայնությանը) անհայտ է. գուցե եւ սխալվում եմ, բայց ենթադրում եմ, որ այս ստորագրությունը կեղծ է կամ ծածկանուն է: Շիտակ մարդն իր ինքնությունը չէր ծածկի, բայց դե՝ իր գործն է: Իսկ ահա այն, որ սույն պարոնը (գուցե տիկի՞նը) անձամբ ինձ վերագրել է չեղած մեղքեր, թյուրիմացության մեջ գցելով նաեւ իմ ընթերցողներին, որոնց կարծիքն ինձ համար թանկ է, արդեն իմ գործն է եւ ես այս անհիմն ամբաստանությունները լռությամբ կուլ տալ չեմ կարող:

Սույն հեղինակը, նկատի առնելով «Ազգի» օգոստոսի 20-ի համարում լույս տեսած իմ «Իսկ եթե մեր նախագահը Բաքու գնա՞ր» հրապարակումը (որն, ի դեպ, զետեղված էր «Տեսակետ» խորագրի տակ եւ դրանով իսկ անթաքույց մատնանշվում էր, որ խոսքը զուտ իմ անձնական տեսակետի մասին է, ինչն ունենալու իրավունքը «Մ. Կարինյանը» իր համար պարտադիր է համարում, չգիտես ինչու վիճարկելով նույն իրավունքից օգտվելն ինձ համար), սեւով սպիտակի վրա գրում է. «Քաղաքական հավակնոտ կեցվածքով է վերջերս ներկայանում նաեւ «Ազգ» թերթի մեկնաբան Ռ. Հովհաննիսյանը, որը փորձում է մերկացնել ՀՀ նախագահի՝ Բաքու գնալու կողմնակիցների փաստարկները»:

Մարդ է, կարող է եւ այդ տպավորությունն է ստացել, մեղքն իր վիզը: Բայց եկեք տեսնենք, թե իրականում մեզնից ո՞վ է «հավակնոտը»: Իմ հրապարակման մեջ գրել եմ. «Ես չեմ բացառում, որ Բաքու գնալուց ձեռնպահ մնալով, նախագահ Քոչարյանը նկատի է ունեցել նաեւ այլ հանգամանքներ, որոնք, շատ հնարավոր է, մատչելի չեն ինձ... Վատ չէր լինի, եթե համանման իրավիճակներում իրենց դատողություններն ազատություն վերապահող եւ «վերին ճշմարտությունը» բարբառողի կեցվածք ընդունած այլք նույնպես ընդունակ լինեին կասկածի տակ դնելու իրենց ամենագիտությունը»: Հետաքրքիր է նկատել, որ ես կասկածի տակ եմ դրել իմ «ամենագիտությունը»: Էլ սրա ի՞նչն է «հավակնոտ»: Իսկ ահա ընդդիմախոսս դատախազական անառարկելի տոնով ընդունելի եւ շատ հաճախ անընդունելի դատողություններ է անում առաջին տողից մինչեւ վերջինը, դասեր է տալիս, պիտակներ է փակցնում, հայտարարություններ անում՝ անսխալականի հավերով, ասելիքը վերջացնելով մի ազդու սպառնալիքով. «Զգուշացեք, պարոնայք քաղաքագետներ»: Ահա այսպիսի զարմանալի «համեստություն»: Այս «համեստ» հեղինակը նաեւ ինձ է մեղադրում, թե հանդգնում եմ վերաստեղծել «4-րդ իշխանության» պակաս հայտնի, երիտասարդ (նույնիսկ՝ պատանեկան) եւ ձեւավորման փուլում գտնվող» շարասյանը, որը «դեռեւս ի զորու չէ նոր, արդի մակարդակով մասնակցել քաղաքական վերլուծություններին, չնայած կան հաճելի, բայց եզակի բացառություններ»: Ահա նաեւ ես, նզովյալս, պետք է «խիստ զգուշավոր» լինեմ, «քանզի երիտասարդ սերունդն ինչ տեսնում է, այն էլ սովորում է»:

Թե երիտասարդ սերունդն ի՞նչ է սովորում կամ ինչ է սովորելու՝ չեմ կարող ասել, բայց փաստերի նենգափոխում, աղճատված եւ աղավաղված մեջբերումներ, դիմացինին հնարովի մտքերի վերագրում եւ դրանց «քաջաբար» հերքում, ինչպես իրեն թույլ է տալիս «Մ. Կարինյանը», ինձնից հաստատ չի սովորի: Սույն հեղինակը նենգափոխել է իմ հոդվածը արդեն նրանով, որ ինձ վերագրում է «ՀՀ նախագահի՝ Բաքու գնալու կողմնակիցների փաստարկները մերկացնելու» մտայնություն: Սուտ է, բացարձակապես այդպիսի բան չկա, ես գրել եմ, թե «ինչ որոշում էլ Քոչարյանն ընդուներ՝ նրան քարկոծելու էին», եւ բերել եմ Բաքու գնալու կողմնակիցների փաստարկները, ավելացնելով. «Եթե նախագահ Քոչարյանը որոշած լիներ Բաքու գնալ», ապա այս դեպքում էլ նրա հակառակորդները բերելու էին հակառակ «փաստարկները»: Այնուհետեւ փորձել եմ կարողությունս ներիս չափով ծանր ու թեթեւ անել դրանք, հարեւանցիորեն նկատելով, որ նախագահի փոխարեն Բաքու մեկնող պատվիրակության ղեկավար Արմեն Դարբինյանին ոմանք «բարեհաճում են» «քաղաքական դեմ» չհամարել»: Նկատի առնելով Ազ պատգամավոր Դավիթ Շահնազարյանին, այստեղ ես փակագծում ավելացրել եմ. «Զարմանալի տրամաբանություն. խորհրդարանի շարքային պատգամավորը «քաղաքական դեմ» է, իսկ երկրի գործադիր իշխանության ղեկավարը՝ ո՞չ»: Սրանով ես ամենեւին չեմ մերժել պրն Դավիթ Շահնազարյանի «քաղաքական դեմ» լինելը, ես միայն հաստատել եմ, որ այդպիսին պետք է համարվի նաեւ երկրի գործադիր իշխանության ղեկավարը: Արի ու տես՝ պարոն կամ տիկին «Մ. Կարինյանը» համաձայն չէ եւ գրում է. «Մեկնաբանին հատկապես վրդովեցրել է այն իրողությունը, որ «քաղաքական դեմ» է դարձել ոչ թե վարչապետը, այլ խորհրդարանի շարքային պատգամավորը» (այնուհետեւ թվարկում է պարոն Շահնազարյանի արժանիքները, որոնք, իր կարծիքով, ես «մոռացել» եմ): Ինչո՞ւ այսպես նենգափոխել հարցի էությունը, որտե՞ղ է իմ «հատուկ վրդովմունքը», փակագծում բերած հարեւանցի ռեպլիկի մե՞ջ:

Եվ՝ վերջինը: Ընդդիմախոսս ընդգծում է, թե ես «ցնցող» եզրակացություն եմ անում, ենթադրելով, որ «ՏՐԱՍԵԿԱ-ի ծրագիրը, կամ մեծասի ճանապարհը վերակենդանացնելը Հայաստանի համար խիստ վտանգավոր է, քանի որ... նրա հետու գնացող նպատակը Ռուսաստանին Կովկասից դուրս մղելն է»: Սրա առաջին մասը իմ ասածների անբարեխիղճ վերաբարադրանքն է, ես չեմ գրել, թե «ՏՐԱՍԵԿԱ-ն Հայաստանի համար խիստ վտանգավոր է»: Բայց երկրորդ մասը ճիշտ է հասկացվել. գտել եւ գտնում եմ, որ ՏՐԱՍԵԿԱ-ն ոչ միայն տնտեսական նշանակության ունի, այլեւ քաղաքական, եւ դրա «հեռագնա նպատակը Կովկասյան տարածաշրջանից Ռուսաստանի քաղաքական դուրսմղումն է»: Ավելացնեմ՝ նաեւ ԱՄՆ-ի քաղաքական դուրսմղումը, անձանոթ պարոն կամ տիկին, եւ եթե այս իրողությունը ձեր «խորագիտակ մտքին» հատու չէ, ապա դա արդեն, կներեք, իմ մեղքը չէ: Չհասկացած բաներից գրելիս ձեր մտքի սահմանափակությունը էժանագին հեգնանքով հողարկելու ջանքը դրությունը չի փրկում: Ավա՜ղ: Ուստի թող ընթերցողը որոշի, թե այսքանից հետո մեզանից ո՞վ է իսկապես «պարզունակը»:

ՌՈՒԶԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ծառայություններ

Ընթերցողները երեւի հիշում են «Ազգի» մայիս ամսվա համարներից մեկում տպագրված «Տղերը վագոնի գործ են անում, իսկ ուղեւորները թող սպասեն» հոդվածը Վանաձոր-Այրում էլեկտրագնացքի մասին: Անցել է ավելի քան երեք ամիս, ի՞նչ վիճակ է տիրում այսօր: Հակված լինելով որեւէ դրական փոփոխություն տեսնելու, նորից ա լինելու:

– Հլա էդ տրանսպորտի նախարարին մեկը բերի ու նստեցնի էս սեկցիան, ասի՝ դե շոգ-կրակին դու էլ մեզ հետ խաշվիր,- ավելացրեց մեկ ուրիշը:

Լոռեցիների զույցը շարունակվեց մինչեւ ժամը 19:42-ը, երբ էլեկտրաքարշը բերեց «գռուզը»: Հսկա տարողություններ վրա «բենզին» եւ «շաս կարեւոր» լինելով, առաջ է անցել եւ նորից խանգարել... Ավելորդ է նկարագրել ուղեւորների տանջանքը, դժգոհությունը եւ, իհարկե, հայհոյանքները՝ ուղղված մեղավորներին:

Շուրջ մեկ ժամ պահանջվեց բենզինի վագոնների գործը կարգավորելու եւ երկաթուղին բացելու համար:

Գնացքը տեղ հասավ կեսգիշերին:

ԵՐԿԱԹՈՒՂԻ

«Գնացքը դառոգի պես ա պատկանում»

«բախտ ունեցանք» օգտվել այդ գնացքից:

Օգոստոսի 22-ի առավոտյան, հորդ անձրեւի տակ, մթության մեջ ուղեւորները ստիպված էին վերգետնյա անցումով վերուվար անել եւ տեղափոխվել երկրորդ գիծ, ուր կանգնած էր գնացքը: Երկաթուղայինները բացատրեցին, որ կես ժամ առաջ առաջին գիծը զբաղված է եղել: «Հետաքրքիր» պատճառաբանություն: Ուղեւորները ստիպված եղան նաեւ վագոններում շուրջ մեկ ժամ մթության մեջ սպասել: Այդ օրը գնացքը տեղ հասավ համեմատաբար տանելի ժամի:

Անցած կիրակի օրը, օգոստոսի 30-ին, Այրում կայարանում անսովոր հանգստություն էր տիրում նույնիսկ գնացքը շարժվելու ժամից 18-ից մեկ ժամ հետո: Կայարանի հերթապահ Վոլոդյա Ավագյանից տեղեկացանք, որ էլեկտրաքարշը մեկնել է Սադախլո՝ «գռուզ» բերելու:

Իմանալով, որ լրագրող եմ, մի ծեր ուղեւոր հրմնջաց.

– Տղա ջան, ինչքան ուզում ես գրի, սրանց դեկավարների համար մեկ ա, էլի նույն անտարբերությունն «սպիրտ» էր գրված:



Դոդրոցականների մեկն իրավացիորեն դժգոհեց.

– Ամառվա արձակուրդի վերջին կիրակի օրը, բնականաբար, գնացքը լի էր երեխաներով: Կային նաեւ բազմաթիվ ծերեր:

Նոր անակնկալ էր սպասում Քոքեր կայարանում, ուր մեզ պատասխանեցին, թե Թումանյան կայարանի գործակարգավար-հերթապահ Ֆելոն գնացքը չի ընդունում: Տարբեր մեկնաբանություններ եղան՝ բենզինի վագոն են անջատում, «կարող ա գծից ընկել ա»... Պարզվեց, որ այն «գռուզը», որի պատճառով էլեկտրագնացքը ուշացել է, մոտավորապես հրաժարվեց «կլյաուզնի» հարցերին պատասխանելուց, չնայած դեռեւս ոչ մի հարց չէինք ուղղել նրան: Նա «կարգադրեց» այդ մասին ոչինչ չգրել: «Գնացքը ինձ չի պատկանում», փորձեց արդարանալ հարգարժան կայարանապետը եւ այնքան ոգեւորվեց, որ լրագրողին շփոթելով իր ենթակաների հետ, սկսեց հայհոյել: Իսկ հայհոյանքը սովորաբար նույնիսկ Հարավային Աֆրիկայի երկրներում փոխադարձ է լինում: Այնպես որ, ստիպված եղանք իջնել «ինտելիգենտ կայարանապետի» մակարդակին: Մեզանից մեկն ու մեկի բախտը բերեց միայն այնքանով, որ հեռախոսով էինք խոսում, այլապես բռնցքամարտն անխուսափելի էր:

Ավելորդ է հիշեցնել «դուխով» կայարանապետին, որ ուղեւորները վճարում են ժամանակին ու նորմալ վագոններով տեղ հասնելու համար: Ավելորդ է նաեւ որեւէ տարբերություն փնտրել վագոնների եւ խոզանոցի միջեւ: Սակայն այդ ամենից տուժում են նաեւ հենց իրենք գնացքի տերերը, քանզի ուղեւորների մի մասը ստիպված է լինում բեռնատար գնացքների էլեկտրաքարշերով տեղ հասնել: Այսինքն՝ «ուղեւորի գործ» անելու շահավետությունը զգալիորեն իջնում է: Զարմանալիորեն երկու ուղերթի ժամանակ էլ տոմսավաճառները խոսում էին նույն բարբառով, ինչ Ռ. Սեխլեյանը, սակայն շաս բարի էին եւ հարմարվում էին ուղեւորների հետ՝ երբեմն էլ գիշելով նրանց ուղեվարձը:

Չլուծվող հիմնահարցեր չկան, կան մարդիկ, որոնց ձեռնտու չէ հարցերի պատասխանել եւ լուծել այն հիմնահարցերը, որոնց մեջ այնքան էլ շահ չունեն:

Դժվար է կռահել, թե ինչ պատասխանատվության կենթարկվի «ազգի հերոս» կայարանապետը լրագրողին վիրավորելու համար, սակայն հարկ ենք համարում նշել, որ նա սպառնաց հաշվեհարդար տեսնել գրելու դեպքում: Եվ եթե մի օր... Ասված չանի... իմ մահվան համար մեղադրեք Կլավա Կ-ին (կներեք, Ռաֆայել Ս.-ին): Չնայած նրա նմանները միշտ էլ «անմեղ են», մանավանդ որ «գնացքը պատկանում ա դառոգի պեսին»: Վերջինիս հետ մենք ուղղակի չցանկացանք որեւէ հարց պարզաբանել, քանզի ամեն ինչ պարզից էլ պարզ է՝ թե՛ կայարանապետը, եւ այդ գործի բոլոր պատասխանատուները տառապում են անպատժելիության բարդույթով եւ թքած ունեն ժողովրդի արժանապատվության վրա: Անտերությունը շարունակվում է, մինչեւ ե՞րբ...

Մ. ՄԿՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

Մամլո նորընծա քարտուղարուհին հավատում է իր նախագահին

Հարցազրույց Կասյա Աբգարյանի հետ՝ կենսագրական մեջբերումներով

Հայաստանի նախագահի սեպտեմբերի 1-ի կարգադրությամբ նախագահի խորհրդական Կասյա Աբգարյանը նշանակվել է ՀՀ նախագահի մամուլի քարտուղար: Նա ծնվել է 1967 թվականի մայիսի 24-ին Հալեպում:

– Ծնվել եմ նկուղում ռմբակոծության ժամանակ -արաբ-իսրայելական 7-օրյա պատերազմն էր: Երբ 6 տարեկան էի, ընտանիքով տեղափոխվեցինք Լիբանան. սկսվեց պատերազմը, ողջ մանկությունս անցավ պատերազմի պայմաններում: 14 տարեկան հասակում հասատվեցի ԱՄՆ-ում, Միացյալ Նահանգները հարձակվեց Իրաքի վրա, պատմում է Կ. Աբգարյանը: Հայրս կեսկատակ-կեսլուրջ ասում է. ուր գնում ես, պատերազմ է բռնկվում... Նա Ուրֆայից է, մայրս խարբերդցի: Հայրս Հարություն Աբգարյանը մինչեւ 1964 թ. Սիրիայի օդուժի սպա էր, նրանցից, ովքեր ֆրանսիացիների մեկնումից հետո մասնակցեցին այդ երկրի զինված ուժերի ստեղծմանը: Այդ նպատակով գործուղվել էր Հյուսթոն (Տեխասի նահանգ), նրան է պատկանում ռազմօդային տեխնիկայի ողջ փաստաթղթային մասի թարգմանությունը ֆրանսերենից արաբերեն:

– Ճանաչո՞ւմ է Սիրիայի նախագահ գեներալ Հաֆեզ Ասադին:

– Ոչ միայն ճանաչում է, այլեւ հետը ծառայություն է անցել մի զորանոցում: Մայրս 30 տարի շարունակ Փարիզում զբաղվել է հագուստի նորաձեւությամբ եւ արտահանումով դեպի Մերձավոր Արեւելքի ու Ամերիկայի երկրները: Այժմ նա փակել է ընկերությունը եւ թոշակառու է, շուտով կգա Հայաստան՝ տեսնելու դստերն ու թոռնուհուն:

1985 թ. ավարտել է միջնակարգ դպրոց Կալիֆոռնիայում, 1988 թ.՝ Կալիֆոռնիայի համալսարանը քաղաքագիտության, ամերիկա-խորհրդային հարաբերություններ մասնագիտությամբ, 1992 թ.՝ Լա Վերն համալսարանը, դառնալով իրավագիտության դոկտոր: 1991-92 թթ. աշխատել է քաղաքացիական իրավունքների ամերիկյան միությունում, զբաղվել բանտարկյալների քաղաքացիական իրավունքների պաշտպանությամբ: 1992-94 թթ. եղել է Ամերիկայի հայկական համագումարի երեւանյան գրասենյակի տնօրեն, 1994-95 թթ.՝ համագումարի փոխտնօրեն: 1995-96 թթ. Կ. Աբգարյանին ուղարկում են Կալիֆոռնիա, հիմնելու համագումարի տարածաշրջանային բաժանմունքը: Հիշեցնենք, որ Ամերիկայի հայկական համագումարը ամերիկահայության լոբբիստական կազմակերպություն է, որը զբաղվում է հայաստանյան եւ հայկական հարցերի առաջխաղացմամբ ու պարզաբանմամբ ԱՄՆ-ի Կոնգրեսում՝ պետական այլ ատյաններում: 1996-97 թթ. աշխատակցել է ԱՄՆ-ում ՀՀ դեսպանությանը, որպես դեսպան Ռուբեն Շուգարովի օգնական: 1997 թ. ստանձնել է տնօրենությունը «Դեմոկրաս-2000» կազմակերպության, որը ծրագրավորում է ԱՄՆ-ի Կոնգրեսի ընտրություններին դեմոկրատական կուսակցության թեկնածուների նախընտրական աշխատանքները:

– Այս տարվա փետրվարին արձակուրդ վերցրի 6 ամսով եւ եկա Հայաստան, դարձա վարչապետի օգնական, աշխատեցի Ռոբերտ Քոչարյանի նախընտրական շտաբում: Մայիսին թողեցի գործերս, վաճառեցի տունս եւ ընտանիքի տեղափոխվեցի Երեւան: Հուլիսից նախագահ Ռոբերտ Քոչարյանի խորհրդականն եմ:

Հայերենից բացի, խոսում է արաբերեն, անգլերեն ու ֆրանսերեն: Ահա արդեն 3 տարի ամուսնացած է. ամուսինը՝ Թիմ Ջեմալը ծնվել է Դետրոյթ քաղաքում, իրանահայերի ընտանիքում (ցավոք, առայժմ հայերեն չի խոսում), աշխատել է Ամերիկայի հայկական համագումարի Վաշինգտոնի գրասենյակում, հիմնել է «Մետաքսի ճանապարհների ներդրում» ընկերությունը, որը զբաղվում է Հայաստանի տնտեսության մասնավոր հատվածում օտարերկրյա ներդրումների քաջալերմամբ:

Դուստրը 11 ամսական է, անունը Արիա (արի բառից)-Աստղիկ Ջեմալ:

– Ուզում եմ, որ աղջիկս մեծանա Հայաստանում, որ հայերենը նրա համար օտար լեզու չլինի, հավասարապես տիրապետի եւ հայերենին եւ անգլերենին: Դրա համար հայ դայակ ունի:

Հայաստանում ամենից շաս դուր է գալիս մարդկայնությունը, մարդկանց ջերմ հարաբերությունները: Կյանքը հիրավի մարդկային է այստեղ. ԱՄՆ-ում կյանքը բարգավաճ է, սակայն մարդկային անմիջականությունից ու ջերմությունից զուրկ: Այնտեղ մարդիկ տառապում են մենությունից, հատկապես եթե երեխաներդ ընտանիքից դուրս են...

– Իսկ ի՞նչ թերություններ եք տեսնում Հայաստանում:

– Այստեղ ամեն ինչ անձնավորված է:

Նախագահի մամլո քարտուղարը ԱՄՆ-ի եւ Սիրիայի քաղաքացի է:

– Անկախ նրանից, թե ինչ անձնագիր ունեմ, միշտ ինձ հայ եմ զգացել: Սպասում եմ երկքաղաքացիությունն ընդունվի, որպեսզի դառնամ նաեւ ՀՀ քաղաքացի: Ամուսինս մեծացել է ամերիկյան շրջապատում, իբրեւ ամերիկացի, եւ միայն 25 տարեկան դառնալով է զգացել իր արմատները:

Երբ ՀՀ Սահմանադրությամբ բացառվեց երկքաղաքացիությունը, սփյուռքն իրեն դուրս մղված զգաց, ինչ-որ անջրպետ անցավ սփյուռքի եւ մայր հայրենիքի միջեւ: Այժմ մեծ հույսեր ենք կապում Սահմանադրության փոփոխությունների հետ, եւ կարեւոր է անել այնպես, որ հանգամանքների բերումով օտարության մեջ հայտնված հայերը կարողանան մասնակցել հայրենիքի բարգավաճմանը, իսկ ժամանակի ընթացքում ձեզ բերեն նաեւ ընտրության եւ ընտրվելու իրավունքը:

– Երբվանի՞ց եք ծանոթ Ռոբերտ Քոչարյանի հետ:

– Ես աշխատում էի Հայկական համագումարի երեւանյան գրասենյակում, երբ Ռ. Քոչարյանը Լեռնային Ղարաբաղի նախագահն էր: 1996 թ. նրա գլխավորված պատվիրակությունը ժամանել էր ԱՄՆ, ես այդ այցը կազմակերպողներից մեկն էի, մշտապես ուղեկցում էի պատվիրակությանը: 10-օրյա այցի ընթացքում շաս առիթ եղավ խոսելու, մտերիմ փոխանակելու: Պրն Քոչարյանն առաջին անգամ էր գալիս ԱՄՆ, սակայն տպավորությունն այնպիսին էր, թե նա ողջ կյանքը բանակցություններ է վարել ամերիկացիներում: Մեծ կարողություններ ունեցող, զարմանալի մարդ է: Ես հավատում եմ Ռոբերտ Քոչարյանին, համոզված եմ, որ կկարողանա լուծում տալ հանրապետության բոլոր կնճռոտ հարցերին, երկիրը դուրս կհանի ծգնաժամից եւ Հայաստանը 21-րդ դար կմտնի որպես ազգերի համաշխարհային ընտանիքի լիիրավ, հավասար անդամ, իր տնտեսական ներուժով:

– Լսո՞ւմ է Ձեր խորհուրդները:

– Նախագահը տեղեկատվություն է ստանում ամենատարբեր խողովակներով, սակայն ամենավստանգավոր բանն է, եթե կտրվի ժողովրդից: Մեր խնդիրն է աղահովել այդ մշտական կենտրոն կապը...

– Ձեր աշխատակազմի մասին:

– Ժիրայր Լիպարիտյանի երկու նախկին աշխատակիցներն են Ծովինար Համբարձումյանն ու Սյոզան Գրիգորյանը: Վերջերս սկսել է աշխատել Հայաստանի ամերիկյան համալսարանի շրջանավարտ Լուսինե Անանյանը (պրոֆեսոր Գառնիկ Անանյանի դուստրը): Արտգործնախարարությունից այստեղ գործուղվել է Մարթա Այվազյանը: Վարորդը եւս աշխատել է Ժ. Լիպարիտյանի հետ:

– Մի խոսքով, գերազանցապես կանանց կոլեկտիվ է: Տղամարդկանց չե՞ք ընդունում:

– Շուտով կլինի:

– Իսկ ինչպիսի՞ք են հարաբերությունները նախագահի մամուլի ծառայության հետ:

– Շաս սերտ, օրը 2-3 անգամ հանդիպում, խորհրդակցում ենք նախագահի գործունեությունը լուսաբանելու հարցերի շուրջ: Նախագահի մյուս խորհրդականների հետ հավաքվում ենք շաբաթը մեկ, միասին լինում նախագահի մոտ:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ
ՌՏՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգ»-ի համար

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայում այնուամենայնիվ սիրում են Քոլին

Սեպտեմբերի 27-ին Գերմանիայում կայանալիք Բունդեսթագի եւ կանցլերի ընտրություններին հիչ ժամանակ է մնացել: Գլխավոր թեկնածուներն են ներկայիս կանցլեր Հելմուտ Քոլը (քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություն) եւ սոցիալ-դեմոկրատ Գերհարդ Շրյոդերը: Ներկայումս գերմանական քաղաքների բենզինի պատերին փակցված ընտրական պաստառների վրա շատ հաճախ զանազան կենդանիներ են պատկերում: Այսպես, սոցիալ-դեմոկրատների պաստառներից մեկի վրա վերջերս պատկերված էր դինոզավրի մի տարատեսակ եւ արված էր հետեւյալ մեկնաբանությունը. «Եղել են չափազանց խոշոր կենդանիներ, որոնք սպիտված հեռացել են միջավայրի փոփոխման պատճառով»: Անկասկած, սոցիալ-դեմոկրատները դրանով ակնարկում էին կանցլեր Հելմուտ Քոլի մարմնեղությունը եւ նրա քաղաքականությանը երբեմն վերագրվող որոշակի քարացածությունը: Իսկ քրիստոնեա-դեմոկրատների պաստառներից մեկի վրա լճից ելնող փիղ է պատկերված (Քոլն իր առաջնորդը մշտապես անցկացնում է ավստրիական Վոլֆգանգ լճի ափին): Ակնարկը թափանցիկ է. Հելմուտ Քոլի մարմնեղությունը ինքնին գերմանացիների ապահովության երաշխիքն է:

Թեեւ սոցիալ-դեմոկրատների թեկնածու Գերհարդ Շրյոդերը հարցումների համաձայն ավելի շատ քվեներ ստանալու հնարավորություններ ունի, սակայն Գերմանիայի տնտեսական իրավիճակի բարելավումը եւ գործազրկության կրճատումը վերջին շաբաթներին կրկին բարձրացրել են կանցլեր Հելմուտ Քոլի վարկանիշը: Իր ամառային ավանդական հեռուստատեսային հարցազրույցի ժամանակ Քոլը հայտարարել էր, որ երկիրը լավ վիճակում է, կառավարությունը հիանալի նախարարներ ունի եւ որ ինքը կանխավայելում է աշնանը սոցիալ-դեմոկրատներին հաղթելու հաճույքը: Այդ ինքնավստահությունը բնորոշ է Քոլին: Այսպես, երբ օգոստոսին նրան մի անգամ հիշեցրին, որ ընտրությունների վաղաժամկետ անցկացման դեպքում հարցումների համաձայն ինքը պարտություն կկրեր, նա հանգիստ պատասխանեց. «Բայց չէ որ վաղաժամկետ ընտրություններ չեն լինելու»:

Թեեւ Գերհարդ Շրյոդերը ընտրաքարոզչական ընթացքում իրեն այնպես է պահում, ասես արդեն ընտրված լինի, այդուհանդերձ, նա սիրված է հաշվի առնել այսպես կոչված «փղի ազդավարությունը» (փիղը Հելմուտ Քոլի խորհրդանիշն է): Գերմանիայում անցկացված բոլոր հարցումների արդյունքները վկայում են, որ Հելմուտ Քոլի 16-ամյա կանցլերությունը փոքր-ինչ ձանձրացրել է գերմանացիներին: Սակայն նրանք քաղաքական հեղաբեկումներ չեն ուզում: Մի խոսքով, «Էքսպրես» հանդեսի թղթակից Միշել Ժորժի դիպուկ բնորոշմամբ, գերմանացիներն ուզում են «Քոլ առանց Քոլի»: Ուստի Շրյոդերը սիրված է համակերպվել դրան: Շրյոդերին հանդիմանում են, որ նա լավատեղյակ չէ միջազգային խնդիրներին, մինչդեռ միջազգային քաղաքականությունը Քոլի ուժեղ կողմերից մեկն է: Այդ պատճառով Շրյոդերը ընթացիկ տարվա ամռանը Բրյուսել, Վաշինգտոն եւ Փարիզ այցելեց որոշ փորձ ձեռք բերելու համար: Անգլերեն հիանալի տիրապետող Շրյոդերը հայտարարեց, թե ինքն իր ուղեկիցը անցկացնում է Ֆրանսիայում, պատշտում է գրականությունը, ֆրանսիական գինիներն ու խոհանոցը: Նա Ֆրանսիայի վարչապետ Լիոնել Ժոսպենին հավաստիացրեց, թե ֆրանս-գերմանական շատ բարդ հարաբերություններում ոչինչ չի փոխվելու: Մի խոսքով, Շրյոդերը որեւէ նոր բան չասաց, բայց կարեւորը Գերմանիայի քաղաքական գծի շարունակումն է: ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի հետ կայացած հանդիպման ժամանակ Շրյոդերը վերահաստատեց ՆԱՏՕ-ի անսասանությունը, միաժամանակ խուսափելով այնպիսի նուրբ հարցերի արծարծումից, ինչպիսիք են ՆԱՏՕ-ի հրամանատարական կառույցները, միջազգային մշտական դատարանը, ՆԱՏՕ-Իրան հարաբերությունները:

Ներքին քաղաքականության բնագավառում Շրյոդերը դատապարտում է հարկային բարեփոխման եւ բժշկական ապահովագրման նոր նախագծերը, որոնք «ծանր բեռ կդառնան ամենաաղքատների համար»: Բայց ընդհանուր առմամբ, սոցիալ-դեմոկրատների թեկնածուի ծրագիրը գրեթե չի տարբերվում քրիստոնեա-դեմոկրատների ծրագրից: Վերջերս գերմանացիները Գերհարդ Շրյոդերին ավելի ու ավելի հաճախ են հարցնում, թե նա ի վերջո ինչո՞վ է տարբերվում կանցլեր Հելմուտ Քոլից: Շրյոդերը սիրված խուսափողական պատասխան է տալիս, ասելով. «Տարբերությունը երեւում է»: Շրյոդերի միակ «առավելությունը» թերեւս նրա տարիքն է. նա 54 տարեկան է, մինչդեռ Հելմուտ Քոլն արդեն 68 տարեկան է:

Պ. Ք.



Տարտաբերվել է Ինտերնետում գործող խոշոր հանցախումբը

Հոկտեմբերի շուրջ 100 մարդ է ձերբակալվել Ինտերնետում մանկական պոռնոգրաֆիա տարածելու ամբաստանությամբ, տեղեկացնում է Ռոյթերը Լոնդոնից: Ըստ արտաքին կազմակերպված բրիտանական ոստիկանության տվյալների, հանցագործ ցանցն ընդգրկում է 12 երկիր եւ մինչ այժմ հայտնաբերվածներից խոշորագույնն է: «Հրաշքների աշխարհ» (Wonderland) կոչվող ակումբում հայտնաբերվել են 2 եւ բարձր տարիքի երեխաների ավելի քան 100 հազար անվայելուչ նկարներ:

«Հայտնաբերված նկարների հավաքածուն կարող է սրտխառնոց առաջացնել ցանկացած նորմալ մարդու մեջ: Դա զարհուրելի է», ասել է գործողությունը Բրիտանիայից կազմակերպած Ջոն Սթյուարդսոնը:

«Այս ճանապարհով երեխաներին շահագործող մարդիկ կարծում են, թե կարող են թաքնվել կիբեռնետիկական տարածության մեջ, սակայն սխալվում են: Մենք կգտնենք նրանց եւ օրենքի առաջ կկանգնեցնենք», հայտնում է գործողության ԱՄՆ-ի պատասխանատուն:

Ընդհանուր առմամբ Մեծ Բրիտանիայում 11 մարդ է ձերբակալվել: Ինտերպոլի եւ տեղական ոստիկանությունների աջակցությամբ 33 հասցե է հայտնաբերվել ԱՄՆ-ի 22 նահանգներում. 18՝ Գերմանիայում, 16՝ Իտալիայում, 8՝ Նորվեգիայում, 3՝ Բելգիայում եւ 1-ական Ֆինլանդիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում եւ Պորտուգալիայում:

Բելգիայի ոստիկանության խոսնակի համաձայն, ցանցն առաջարկում էր «մանկական պոռնոյի» ամենաստոր նկարագրություններ: Մարդիկ ածուղի էին հանել նկարների իրենց հավաքածուները: Նրանք այնքան հեռու էին գնացել, որ սեփական երեխաներին էին նկարահանում «ամենացնցող» տեսարաններում:

Հետաքննությունն այժմ ուղղված է այլ ցանցերի հետ կապեր հայտնաբերելուն:

Բրիտանական ոստիկանության համաձայն, ձերբակալվածների մեծամասնությունը տղամարդիկ են, կան նաեւ կանայք: Ձերբակալվել են նաեւ նկարահանումներին մասնակցած մի քանի երեխաներ:

Հարուցված մեղադրանքները տարբերվում են՝ կախված տվյալ երկրի իրավական համակարգից: Սթյուարդսոնի խոսքերով, տվյալների հսկայական բազաները հայտնաբերվել են համակարգչային փորձագետների օգնությամբ:

ԱՄՆ-ի մաքսային ծառայության համաձայն, առաջին անգամ Ինտերնետում մանկական պոռնոգրաֆիայի ցուցադրման գործի հետաքննումը արվել է 1993-ին: Անցած տարի ԱՄՆ-ում 189 մարդ է մեղավոր ճանաչվել մանուկների պոռնոնկարների տնօրինման, արտադրության կամ տարածման մեղադրանքով: «Մենք տեղյակ էինք այս ցանցի գոյությանը, սակայն չէինք սպասում նման չափերի: Նախկինում մեզ հաջողվել էր հայտնաբերել միայն 10 հազար նկար: Այս անգամ առգրավվել է դրա տասնապատիկը», ասել է Սթյուարդսոնը:

Նա ավելացրել է, որ բրիտանական ոստիկանությունը խիստ մտահոգված է սեքսուալ բռնությունների ենթարկված երեխաների ճակատագրով եւ նրանց աջակցություն է ցույց տալիս:

Մնում է ավելացնել, որ չնայած կազմակերպիչը Մեծ Բրիտանիայի ոստիկանությունն էր, գործողությունը ֆինանսավորել էր ԱՄՆ-ի մաքսային ծառայությունը:

ՀԱՄԱՌՈՏ

Իսրայելի վարչապետը կայցելի Վրաստան սեպտեմբերի 9-ին

ԹԲԻԼԻՍԻ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ: ՍՆՄՔ-BS PRESS: Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն սեպտեմբերի 9-ին մեկօրյա այցով կժամանի Թբիլիսի՝ մասնակցելու Վրաստանում հրեաների բնակության 26-դարյա հոբելյանի տոնակատարությանը, հաղորդեց Վրաստանի պետնախարար Զազա Շենգելիան: Նրա խոսքերով, Իսրայելի վարչապետի այցի ընթացքում հանդիպում կանցկացվի վրացական պետության ղեկավարի հետ եւ բանակցություններ կվարվեն երկու երկրների գործարար շրջանակների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կիրիենկոյի որոշումը անիրավազոր է ճանաչվել

ՄՈՍԿՎԱ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: ՌԴ գերագույն դատարանը անիրավազոր է ճանաչել Սերգեյ Կիրիենկոյի գլխավորած նախկին կառավարության որոշումը օգոստոսի 1-ից ՌԴ կենսաթոշակային ֆոնդ ֆիզիկական անձանց եկամուտներից երկու տոկոսի չափով ժամանակավոր նպաստակային գանձում սահմանելու մասին: Այսպիսով, դատարանը բավարարել է Անկախ արհմիությունների դաշնության հայցը:

Չինաստանը 500 հազարով կկրճատի բանակի թվակազմը

ՊԵԿԻՆ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Առաջիկա երեք տարում Չինաստանը 500 հազարով կկրճատի իր բանակի թվակազմը: Այս մասին, ինչպես այսօր հայտնել են տեղեկատվական աղբյուրները, Ռումինիայի զինվորական պատվիրակության հետ կայացած հանդիպման ընթացքում հայտարարել է Չինաստանի ժողովրդա-ազատագրական բանակի գլխավոր շտաբի պետ Ֆու Ցյուանյուն: Նա ասել է, որ այդ միջոցառումները կանցկացվեն երկրի տնտեսական շինարարության խնդիրներին համապատասխան:

Լոնդոնը ուժեղացնում է ահաբեկչության դեմ պայքարը

ԼՈՆԴՈՆ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեծ Բրիտանիայի խորհրդարանի համայնքների պալատը ճնշող մեծամասնությամբ՝ 391 ձայն ընդդեմ 17-ի, այսօր հավանություն տվեց կառավարական օրինագծին, որը ուղղված է ահաբեկչության դեմ պայքարի ուժեղացմանը:

Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, արտահերթ նիստի հավաքված պատգամավորները, որոնք վարչապետ Թոնի Բլեռի որոշմամբ հարկադրված էին ընդհատել ամառային արձակուրդները, աշխատել են մինչեւ ուշ գիշեր, կես առ կես քննարկելով հակաահաբեկչական միջոցառումների նոր փաթեթը:

Օրինագիծը, ինչպես ընդգծել է Թոնի Բլեռը, թույլ կտա «բացառիկ միջոցներ ձեռնարկել ահաբեկիչների դեմ եւ ոչնչացնել Հյուսիսային Իռլանդիայում դիմադրող վերջին խմբավորումներին»:

Հեռաձգվեցին «Ազատություն» ռադիոկայանի պարսկերեն հաղորդումները

«Ազատություն» ռադիոկայանի նոր՝ պարսկերեն հաղորդումները, որոնց հեռարձակումը պետք է սկսվեր սեպտեմբերի 1-ից, հետաձգվել են 1-2 ամսով: Ինչպես նշել էին («Ազգ», 1 սեպտեմբերի 1998 թ.), Չեխիայի կառավարությունը Պրահայից այդ հաղորդումների ժամանակավոր հեռարձակման վերաբերյալ որոշում էր կայացրել, սակայն վերջնական որոշումը պետք է կայացներ տարեվերջին՝ հարցը կրկին քննարկելուց հետո:

«Ազգի» հիշյալ համարում, հաշվի առնելով, որ Չեխիայի այդ որոշումը խիստ բացասաբար ազդեցություն կունենա չեխ-իրանական փոխհարաբերությունների վրա, կանխատեսել էինք, որ տարեվերջին Պրահան հավանաբար կվերանայի այդ որոշումը, քանզի երկու երկրների փոխհարաբերությունների սրումից առավելապես տուժելու է Չեխիայի տնտեսությունը: Ուստի կարելի է ենթադրել, որ «Ազատություն» ռադիոկայանի պարսկերեն հաղորդումների հեռարձակման հետաձգումը ոչ թե պայմանավորված է, ինչպես նշում են միջազգային որոշ ԶԼՄ-ներ, տեխնիկական պատճառներով, այլ, մեծ հավանականությամբ, Պրահայի նոր որոշմամբ, որը չեխ-իրանական փոխհարաբերությունների առավել լարվածությունից խուսափելու նպատակով վերանայել է իր նախկին որոշումը:

Է. Ղ.

«Մակինտոշը» կրկին հիացնում է

Համակարգիչների ասպարեզում 14 տարի առաջ «Power-Macintosh» անհատական համակարգչի ստեղծմամբ հեղաշրջում իրականացրած «Apple-Macintosh» ֆիրման այժմ կրկին հիացնում է պատճառում իր վերջին «Իմակ» համակարգչի շնորհիվ: Օգոստոսի 15-ին այն վաճառքի հանվեց ԱՄՆ-ում: Բայց դեռ վաճառահանումից առաջ ֆիրման «Իմակի» 150000 պատվեր էր ստացել: Պատճառն այն է, որ նորույթը որոշակի առավելություններ ունի ավանդական անհատական համակարգիչների նկատմամբ. ստեղնաշարը սեւ է, «մկան» տեղաշարժման դեպքում լույս է վառվում, գինը մոտ 1700 դոլար է եւ (ամենակարեւորը) չունի սկավառակի (դիսկետի) ընթերցման սարք: Ֆիրմայի ֆրանսիական մասնաճյուղի շուկայագիտության բաժնի տնօրեն Ժան-Պիեռ Ջանեսսին «Էքսպրես» հանդեսի թղթակցի հետ զրուցելիս այն միտքը հայտնեց, թե սկավառակը բնորոշ է ավարտվող 20-րդ դարին, մինչդեռ աղագայի խորհրդանիշը Ինտերնետ միջազգային համակարգչային ցանցն է: Ի դեպ, ֆիրմայի նորույթ «Իմակի» սկզբնատառը պայմանավորված է Ինտերնետով: «Իմակը» վաճառվում է նեռում տեղադրված մոդեմ սարքի հետ: Այս համակարգիչն ի սկզբանե համապատասխան պարամետրեր ունի Ինտերնետին միացվելու համար: Ջանեսսին հավաստիացնում է, թե ցանցին առաջին միացումն իրականացվում է 6 րոպեում:

Այսպիսով, «Իմակը» նախատեսված է անմիջականորեն Ինտերնետ ցանցից սնվելու համար, թեեւ հնարավոր է նաեւ միացնել սկավառակի ընթերցման սարքեր եւ առանձին քարթիջներ: Ֆրանսիայում նոր համակարգիչը կվաճառահանվի սեպտեմբերի 16-ից:

Պ. Ք.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Ոգու քանդակագործը

Լրանում է հայ կերպարվեստի անվանի վարպետներից մեկի՝ Հայաստանի ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարյանի ծննդյան 75-ամյակը: Այս առիթով Հայաստանի նկարիչների միության ցուցասրահում սեպտեմբերի 4-ին բացվում է քանդակագործի անհատական ցուցահանդեսը:

Խոստովանենք ժամանակագրական բավական մեծ ընդգրկում ունեցող նման ցուցադրությունը որքան դժվար է իրականացման առումով, նույնքան ցանկալի, առավել մեր օրերում, երբ ստեղծագործող ամեն մի ճշմարիտ արվեստագետի հետ նորովի շփումն ինքնին բացում է հայ մտավորականի ապրելու, արարելու մեծագույն խորհուրդը, արժեւորում մեր կերպը մեր իսկ լինելիության սահմաններում: Այդպիսին է Սարգիս Բաղդասարյան քանդակագործը, որի 75 տարվա երկրային չափերի մեջ մեզ է ներկայանում այն անչափելին, որ նվիրում, սեր է կոչվում, անանձնական սեր առ մերձավորը, առ երկիրը, հողը հայրենի:

Քանդակագործը ծնվել է Արցախ աշխարհի Բանազուր գյուղի քարագործ վարպետ Իվան Բաղդասարյանի ընտանիքում: 1930 թ.-ին ընտանիքով տեղափոխվել է Երեւան:

1942 թ.-ին «Հանուն հայրենիքի» քանդակով առաջին անգամ մասնակցում է հանրապետական ցուցահանդեսին եւ նույն թվականին զորակոչվում սովետական բանակ: Զորացրվում է 1946 թ.-ին, ընդունվում Երեւանի գեղարվեստի ինստիտուտը, որն ավարտում է 1952 թ.-ին: Նույն թվականից էլ սկսվում է նրա ստեղծագործական բուռն կյանքը, եւ մահի, ավերածության ու հաղթանակի բովով անցած արվեստագետը քարին է հանձնում իր ապրումները, մարմնավորում կերպարներ, որոնց հոգում մշտապես արթուն է եղել հայրենիքի ազատության վսեմ գաղափարը: Այսպես ծնվեցին «Ստեփան Շահումյան», «Հունան Ավետիսյան», «Դավիթ Բեկ», «Ավետիք Իսահակյան» հուշարձանները, «Մրկահավեր», «Հավերժ միասին» եւ այլ մոնումենտալ կոմպոզիցիաներ, հայ մտավորականների դիմանկարներ (Ս. Խանզադյան, Վ. Սարոյան, Պ. Սեւակ, է. Իսաբեկյան, Ս. Սարգսյան եւ ուրիշներ):



Սարգիս Բաղդասարյան

Սակայն ստեղծագործական անդուլ որոնումների, ակնհայտ հաջողությունների, կառավարական բազմաթիվ պարգեւների (այդ թվում՝ Հայաստանի պետական մրցանակ) ետեւում ապրում ու մտորում էր մի վիրավոր ու առնական ոգի, որ ամեն օր փնտրում էր իր մշտագո ճանապարհը, իր ցավի ու տառապանքի ճանապարհը: Դա Արցախ աշխարհ տանող ոգեղեն ճանապարհն է, որն այնուհետեւ դարձավ նրա լինելիության մեծ եւ իմաստուն ճանապարհը: Քանդակագործի ստեղծագործության մեջ այսպիսով կարեւորվում է արցախյան թեման, որն ընդգրկում է բազմաթիվ դիմանկարներ, այդ թվում «Հարյուրամյա ծերունին», «Մտորում», «Այան աքեր», «Ղարաբաղցի կինը», նկարչի մոր եւ հոր դիմանկարները: Արցախյան շարքը, որպես թեմա, զուտ պայմանական բնորոշում է: Բաղդասարյանի մոտ այն առավել շոշափում է հոգեբանական խորը շերտեր, ուր անթեղված ներքին կրակը մի օր պետք է բորբոքվեր, տարածվեր եւ ժայթքեր հրաբուխի պես: Ու ծնվեց տուֆակերտ «Ղարաբաղցիներ» («Մենք ենք, մեր սարերը») կոթողը, ավելի շուտ ոչ թե ծնվեց, այլ արարվեց կարծես հարազատ հողի երկունքի ցավից, որպես հավերժության մշտարթուն մունետիկ՝ ի լուր աշխարհի, որ կա, ապրում է Ղարաբաղը, ղարաբաղցին ազատության իր անկուն կամքով ու զորությամբ: Համաշխարհային մշակույթի պատմության մեջ եզակի մեծերի է բախտ վիճակվել ստեղծել նման մնայուն կոթողներ, որոնք իրենց խորհրդանշական իմաստով որպես մի ողջ ժողովրդի ճակատագրի կանխատեսելի վկայություն գոյատեւում են ժամանակների մեջ: Ազատագրվեց Արցախ աշխարհը, կռվեցին ու հերոսացան հայորդիներ, որոնց կրծքին որպես ազատատենչ ոգու մնայուն կնիք պետք է փայլատակեր քանդակագործի կերտած հուշարձանի պատկերը: Դա Արցախ աշխարհի խորհրդանիշն է, Բաղդասարյան քանդակագործի սիրո, նվիրումի ու հավատի խորհրդանիշը:

Ապրում եւ ստեղծագործում է քանդակագործը, իր իմաստուն արվեստի խորհրդին հաղորդակից դարձնելով երիտասարդ արվեստագետների, որոնք ստեղծագործական կյանք են մտնում, իրենց հոգում որպես կենսատու հատիկ կրելով Բաղդասարյան արվեստագետի, ուսուցչի ու մարդու մեծագույն պատգամը՝ ապրել ու ստեղծագործել հայ արվեստագետ լինելու մեծագույն առաքելությամբ:

ՍԱՐՈ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Դասական եւ ժողովրդական երգեր Արցախի երգչախմբի կատարմամբ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԼՂՀ պետական երաժշտական խմբերի թիվն ավելացել է եւս մեկով. այս տարվանից իր գործունեությունն է սկսել պետական կամերային երգչախումբը՝ Նինա Գրիգորյանի ղեկավարությամբ: Խումբն ստեղծվել է տեղի երաժշտական ուսումնարանի երգչախմբի անդամներից, վերցվել պետական հովանավորության ներքո, ասաց ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Արմեն Սարգսյանը: Այն արդեն նոր ծրագրով մի քանի համերգ է տվել Ստեփանակերտում, դասական եւ ժողովրդական երգերի կատարումներով արժանանալով ունկնդիրների ուշադրությանը:

«Գոռ» պատկերասրահը հրավիրում է դիտելու նոր ցուցադրություններ

ԵՐԵՎԱՆ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իր բացման երրորդ տարին նոր ցուցադրությամբ սկսեց Երեւանի Մոսկովյան փողոցում (Թումանյանի տուն-թանգարանի հարեւանությամբ) գործող «Գոռ» պատկերասրահը: Այցելուները կարող են ծանոթանալ հայ դասական եւ ժամանակակից հեղինակների ընտիր ստեղծագործությունների՝ էդգար Շահին, Ռիշար Ժերանյան, Կոջոյան, Գյուրջյան, Իսաբեկյան, Զարդարյան, Խանջյան եւ այլք, ինչպես նաեւ ձեռք բերել դրանք: Այս աշնանը մենք հատուկ ցուցահանդեսներով նշելու ենք Հայաստանի անկախության տարեդարձը, Երեւանի հոբելյանը եւ երկրաշարժի 10-ամյակը, ասաց պատկերասրահի տնօրեն Ռուբեն Ցազարյանը: Բացի այդ կաշխատենք կազմակերպել հայ հեղինակների ստեղծագործությունների միահատակ ցուցահանդեսներ, ինչպես նաեւ մասնավոր հավաքածուի մի ընտրանու ցուցադրություն: Անցած ցուցաշրջանում մենք ներկայացրել ենք Արա Բեքարյանին, Բենիկ Պետրոսյանին եւ Ֆրենկ Գասպարյանին: Գեղանկարչական աշխատանքներից բացի «Գոռը» ներկայացնում է կիրառական արվեստի եւ ժողովրդական ստեղծագործության նմուշներ:

Ասորերենի խորացված ուսուցմամբ դասարան Պուշկինի անվան դպրոցում

ԵՐԵՎԱՆ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի հրամանով ուսումնական այս տարուց Երեւանի Պուշկինի անվան դպրոցում բացվում է ասորերենի խորացված ուսուցմամբ ռուսական դասարան: Նման միջնորդությամբ նախարարությանն է դիմել «Ասուր» ասորական երիտասարդական կենտրոնը: Այդ մասին հայտնեց կենտրոնի տնօրեն Իրինա Սագրադովա-Գասպարյանը:

Սարիգյուղում արդեն մեկ տարի գործում է «Գալիֆ» կրթարանը

ԻՋԵՎԱՆ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՏԱՆ ՏԱՊԱՆ: Իջեւանի սահմանամերձ Սարիգյուղ բնակավայրում արդեն մեկ տարի գործում է «Գալիֆ» կրթարանը: Այն պատրաստում է կադրեր մանկավարժություն եւ տարրական ուսուցման մեթոդիկա, տնտեսագիտություն, բուժքույրական գործ, իրավագիտություն, կիրառական արվեստ մասնագիտությունների գծով: Կրթարանը արտոնագրված է, ուսման վարձը մատչելի է:

ՍՓՅՈՒՌՔ

Նարնջագույն երկինք. Երգում են հայերը Լոս Անջելեսում

Չորս հայ երիտասարդներ պատրաստվում են իրենց երեկոյան համերգին Փասադենայում: Նրանցից յուրաքանչյուրը երգելու հետ որեւէ գործիք է նվագում: 19-ամյա Սերու (Սեպուհ) Սիմոնյանը, որը նվագում է ստեղնավոր գործիքներ, հանգիստ է, սպասում է համերգի սկսվելուն: 20 տարեկան Նարեկ Պողոսյանը ստուգում է իր բաս կիթառի ձայնը, լարում գործիքը: Մինչ այդ Սեմ Բաբայանը, որը 19 տարեկան է, սպասում է իր հերթին՝ փայլն աչքերի մեջ եւ ժպիտը շուրթերին: Կիթառը պատրաստ պահում է ձեռքում: Իսկ 24-ամյա Վիգեն Սայադյանը, որը հարվածային գործիքների մասնագետ է, նստել է հանգիստ, դիտում է իր երաժիշտների շարժումները եւ մատի վրա պտտեցնում 1940-ականներին նորաձեւ համարվող գլխարկը: Մի քանի րոպե անց նրանք բեմ կհրավիրվեն՝ իրենց երաժշտությունը ներկայացնելու ու երգելու: Իսկ կսկսեն հավանաբար «Նարնջագույն երկինք» երգով: «Ես թռչում եմ նարնջագույն երկնքով...»:

Այս երիտասարդները «Այ Օր» խմբի երաժիշտներն են՝ բոլորն էլ Լոս Անջելեսում ապրող հայեր: Խմբի անունն էլ համահունչ է հայերեն «այր» բառին: Բոլորն էլ ծնվել են Միացյալ Նահանգներից հեռու, իսկ Գլենդեյլ են եկել միայն 1990 թ.-ին: Սեմն ու Նարեկը եկել են Երեւանից եւ հաճախ Սասունցի Դավիթ անվան դպրոցի գաղթած Սերուի եւ Իրաքում մեծացած Վիգենի հետ կատակում են հայկական բարբառների շուրջ: Կատակում են այնպես, ինչպես միայն եղբայրները կարող են կատակել: Եվ ընդհանրապես, եթե ուշադիր լինես, նրանք այնպիսի սիրով ու ջերմությամբ են վերաբերվում միմյանց, կարծես «Այ Օր»-ն նրանց երկրորդ ընտանիքն է:



1994-ին Սերուն ու Սեմը Գլենդեյլի միջնակարգ դպրոցի երգչախմբում երգելիս հանդիպեցին ու հիմնեցին «Հեռավոր զարմիկ» խումբը, որի երաժշտությունն աղերս ուներ հայտնի Փինք Ֆլոյդի ուղղությանը: Խմբում աշխատեցին բազմաթիվ երաժիշտներ, մինչեւ 1997-ի ապրիլին հանդիպեց Վիգենը, որն առանց երկար-բարակ խոսելու համաձայնեց նստել հարվածային գործիքների առաջ: Վիգենի մասին լսել էին, նա մի քանի տարի առաջ ավարտել էր նույն դպրոցը եւ հայտնի էր որպես «հարվածային վարպետ»:

Ավելի ուշ, երբ փնտրում էին չորրորդ երաժշտին, Սեմը հիշեց Նարեկին, որի հետ սովորել էր մինչեւ 7-րդ դասարանը: Նարեկը նույնպես միացավ եւ 1997-ի ամռանը խումբը գործնականում կազմավորված էր ու սկսել էր սեփական երգեր գրել:

Երգեր գրում են բոլորը: Երբեմն մեկը գրում է մյուսի համար: Մյուսը երգում է, բայց յուրովի, քանի որ նրանցից յուրաքանչյուրը յուրօրինակ է, անհատականություն:

Բեմի վրա Նարեկն սկզբում զգույշ է նվագում, ապա աստիճանաբար արագացնում է, հասնում Սեմի տեմպին՝ լավատես, ուրախ, թավոուն: Վիգենը կրակոտ հարվածներ է տեղում հարվածային գործիքներ նվագելու եւ, երգելու հետ միաժամանակ, ձեռքերը ռիթմիկ շարժելու մեջ: Ապա, երբ երգը սկսվում է, խումբը միաձուլվում է, դառնում մեկ ձայն:

Երաժշտությունը մանկուց ուղեկցում է նրանցից յուրաքանչյուրին: Մեկը Ֆլեյտա է նվագել, մեկը ջութակ, մյուսը դաշնամուր: Նարեկն ուսանել է Երեւանի Սայաթ Նովայի անվան երաժշտական դպրոցում եւ դաշնամուր նվագել, մինչեւ Ս. Նահանգներ տեղափոխվելը: Սեմը նվագել սովորել է ինքնուրույն՝ հետեւելով հոր խորհրդին՝ երգը լսելիս ուշադրություն դարձնել յուրաքանչյուր առանձին գործիքի նվագին: Սերուն հիշում է, ինչպես քեռին՝ Շահե Հարբոյանը, սիրում էր իրեն լսել 80-ականների հայտնի պոպ եւ ռոք երգերը: Նարեկն ու Սեմը Բիթլզ եւ Փինք Ֆլոյդ են սիրում, Վիգենը՝ Ֆրենկ Սինատրա: Սերուն բրիտանական խմբեր է լսում՝ «Ռեյդիոհեդ», «Բլուր»:

Այնքան էլ հեշտ չէ ասել, թե ինչ երաժշտություն են նվագում տղաները: Նրանք դեռ երիտասարդ են, անընդհատ ինքնարտահայտման նոր ուղիներ են փնտրում:

Այսօր նվագում են 60-ականների եւ 70-ականների ռոքի եւ բրիտանական պոպի խառնուրդ՝ ազդված 90-ականների ալտերնատիվ երաժշտությունից: Նրանց երգերից մեկը՝ «Զբոսանքը», պատմում է չճաշակված, չհասկացված սիրո մասին: Տղաների կարծիքով՝ իրենք երգում են «սիրո, փախուստի, երիտասարդության, անցյալի ու փառքի» մասին: Դրանցից մեկը պատմում է Հայոց եղեռնի պատմությունը: Այս երիտասարդների համար դժվար չէ հայ մնալ ու երգել արեւմտյան ռոք երգեր: Նրանք բոլորն էլ հայերեն գիտեն, ապրում են իրենց ընտանիքների հետ կամ հարեւանությամբ, կարող են շփվել նրանց հետ, հասարակության հետ, առանց թաքցնելու, որ հայ են:

ԱԻՄ, հուլիս 1998
Թարգմանեց ՌՈՒԶԱՆ
ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ

Հրավեր

Էջմիածնի «Եղիա Քեշիշյան» տուն-թանգարանի խնամակալ մարմինը սիրով հրավիրում է Ձեզ ներկա լինելու



ԵՂԻԱ ՔԵՇԻՇՅԱՆԻ

հիշատակին նվիրված երեկոյին:

Այն տեղի կունենա 1998 թ. սեպտեմբերի 17-ին, հինգշաբթի օրը, ժամը 17-ին, ի նշանավորումն նրա ճահճակության 17-րդ տարելիցի:

Հուշ-երեկոյին մասնակցելու են ճահճակի ծնողները, Եղիա Քեշիշյանի անվան դպրոցի աշակերտները, «ՀՀ միասնության խաչ» կազմակերպության սաները եւ ակումբագրադարանային տեխնիկումի գեղարվեստական խմբակը, հայրենադարձ իրանահայերի մշակութային միությունը:

Հասցեն՝ Էջմիածին, Աթարբեկյան 7, ակումբագրադարանային տեխնիկումի դասերի

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ խաղից առաջ

Անդորրայի հավաքականի հետ Եվրոպայի առաջնության ընտրական խաղին նախապատրաստվող Հայաստանի հավաքականը շարունակում է Երեւանում անցկացվող հավաքը: Մեր հավաքականի 22 ֆուտբոլիստները, բաժանված երկու մասի, ստուգողական հանդիպում անցկացրեցին: Հիմնական կազմը, որը եւ հավանաբար կսկսի անդրանիկ ընտրական հանդիպումը, հանդես եկավ կարմիր գույնի համազգեստով, պահեստային կազմը՝ դեղին գույնի: Խաղն ավարտվեց 4-1 հաշվով՝ հօգուտ «կարմիրների»: Գլխավոր մարզիչ Սուրեն Բարսեղյանն, նրա օգնականներ Ասոն Խաչատրյանին եւ Լեւոն Յաբլուկյանին հիմնականում բավարարում է մեր ֆուտբոլիստների մարզավիճակը: Փոքր-ինչ անհանգստացնում է հարձակման գիծը: Իհարկե, ժամանակ միչ է մնացել, բայց դեռ հնարավոր է բարելավել, շտկել որոշ բաներ:

Վաղը միեւնույն՝ 4-րդ գոտում եւս երկու խաղ կանցկացվի: Կիեւում կմրցեն Ուկրաինայի եւ Ռուսաստանի, Ռեյկյավիկում՝ Իսլանդիայի եւ Ֆրանսիայի հավաքականները:

Աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի բոլոր 22 ֆուտբոլիստները, մարզիչները, հանրահայտ Միշել Պլատինին օրերս Ելիսեյան պալատում երկրի նախագահ Ժակ Շիրակի ձեռից Ֆրանսիայի ամենաբարձր պարգեւը՝ «Պատվո լեգեոնի» շքանշան ստացան: Ի դեմ, մարզիչները Իսլանդիայի հավաքականի հետ խաղի մասնակիցների ցուցակում ընդգրկել են 22 չեմպիոններից 14-ին: Իհարկե, ֆրանսիացիները Ռեյկյավիկ են մեկնում բարձր տրամադրությամբ եւ կարծում են, որ անդրանիկ ընտրական խաղում լուրջ խնդիրներ չեն ունենա:

Այլ է Ռուսաստանի եւ Ուկրաինայի հավաքականների հարցը: Բանն այն է, որ զուտ ֆուտբոլային կողմից բացի, այս հանդիպմանը նաեւ քաղաքական երանգ է տրվել: Որոշ ուժերի հաջողվել է երկուստեք շիկացնել կրքերը: Բանը հասել է այնտեղ, որ «Ինտերնետի» ցանցում տեղ է գտել ուղերձ՝ «Ռուսաստանյան ֆուտբոլի հայրենասերներին» կոչը: Դրանում բավականին վիրավորական արտահայտություններ են հնչում ուկրաինացիների հասցեին: «Ուղերձի» հեղինակները փաստորեն կոչ են անում իրենց գերազանցությունը ցուցադրել ոչ այնքան մարզադաշտում, որքան Կիեւի փողոցներում: Դրա արձագանքը շատ չուշացավ: Ուկրաինական ֆուտբոլասերների նորաստեղծ «Ազգային բրիգադները», որոնք գտնվում են ՈՒՆԱ-ՈՒՆՍՈ ազգայնական կազմակերպության հովանու ներքո, հանդես եկան հայտարարությամբ: Սակայն ուկրաինացիները ավելի զուսպ են տրամադրված: Նրանց ներկայացուցիչները հայտարարեցին, որ չեն պատրաստվում դիմավորել ռուսների գնացքները, եւ համարում են, որ ուժի դրսեւորումը թուլության նշան է: Իսկ իրենք ազգային հավաքականին կաջակցեն մարզադաշտում եւ կապացուցեն, որ մի քանի գլխով բարձր են Ռուսաստանից: Մոսկվայի եւ Կիեւի ֆուտբոլային հարաբերությունները երբեք էլ ջերմ չեն եղել, իսկ ի՞նչ է լինելու վաղը Կիեւի «Օլիմպիական» մարզադաշտում եւ քաղաքի փողոցներում:

Երկու թիմերի հավաքականներն այդ ընթացքում նախապատրաստվում են կարեւոր խաղին: Ռուսաստանի հավաքականը կարճաստեւ հավաք է անցկացնում մերձմոսկովյան Նովոգորսկում: Գլխավոր մարզիչ Անատոլի Բիշովեցը թիմ է հրավիրել 28 ֆուտբոլիստների: Ինչպես մամուլի ասուլիսում ինքն է խոստովանել, մտահոգված է պաշտպանության հարցով, քանի որ այդ գծի երեք խաղացողներ վնասվածքներ ունեն: Բիշովեցն ասել է, թե իրեն դժվար կացության մեջ է դրել նաեւ դարպասապահների խնդիրը:

Ուկրաինայի հավաքականը, Վալերի Լոբանովսկու եւ Յոժեֆ Սաբոյի ղեկավարությամբ, պատրաստվում է Կիեւի «Դինամոյի» Կոնչա Զասպեում գտնվող մարզաբազայում: Ուկրաինացիների պարապմունքներն անցնում են խիստ գաղտնիության պայմաններում: Սակայն հայտնի է դարձել, որ նրանց թիմում էլ կան վնասվածք ստացած ֆուտբոլիստներ:

Ֆրանսիայի հավաքականի ֆուտբոլիստները մարզաբազայի եմ եկիրում Ժ. Շիրակին

ԲՄԲԱՍԱՐՏ

Միայն երկու մասնակից

Իրանի մայրաքաղաք Թեհրանում սեպտեմբերի 8-ին մեկնարկող ազատ ոճի ըմբշամարտի առաջնությունում հանդես կգան Հայաստանի ընդամենը երկու ներկայացուցիչներ՝ երեւանցի Արմեն Սիմոնյանը (54 կգ քաշային կարգ) եւ աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում երկուական անգամ չեմպիոնի կոչում նվաճած, Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղի բնակիչ Արայիկ Գեւորգյանը (69 կգ):

Իհարկե, տխուր փաստ է, որ աշխարհի առաջնություններում Հայաստանի ընդամենը երկու ըմբիշներ հանդես կգան:

Երեկ մեր մարզական պատվիրակությունը մեկնեց Իրան: Այն գլխավորում է հանրապետական Ֆեդերացիայի նախագահ, անցյալում հայտնի ըմբիշ Ստեփան Սարգսյանը: Մեկնել են նաեւ ավագ մարզիչ Հրանտ Եսոյանը եւ մարզիչ Ռազմիկ Գոլեցյանը:

ՖՈՒՏԲՈԼ

Եվրոպական խաղադաշտերում

Բուխարեստում Եվրոպայի առաջնության ընտրական խաղ անցկացրեցին Ռումինիայի եւ Լիխտենշտեյնի հավաքականները: Ռումինացիները 7-0 հաշվով հաղթանակ տարան իրենց մրցակիցների նկատմամբ:

Շորեքշաբթի օրը Եվրոպայում նաեւ երկու ընկերական խաղ տեղի ունեցավ: Հարավսլավիա-Շվեյցարիա հանդիպումն ավարտվեց 1-1 հաշվով, իսկ Մալթայի հավաքականն իր դաշտում ընդամենը 1-2 հաշվով զիջեց Գերմանիայի հավաքականին, որն իր կազմում լուրջ փոփոխություններ է կրել: Ի դեմ, նրա ավագ է նշանակվել իտալական «Միլան» ակումբում հանդես եկող հարձակվող Օլիվեր Բիրհոֆը:

ԲԱՍԿԵՏԲՈԼ

Երկու մրցաշար

Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադում անցկացվեց «Դելտա Տրոֆի» ավանդական, թվով 5-րդ մրցաշարը, որտեղ հանդես եկան Եվրոպայի մի քանի ուժեղ ակումբային թիմեր:

Մրցաշարի հաղթող դարձավ հունական «Օլիմպիակոսը», որը եզրափակիչ խաղում 72-70 (38-29) հաշվով առավելության հասավ գերմանական «Ալբա» թիմի նկատմամբ:

Երրորդ տեղը գրավեց իտալական «Բենետտոնը»: Տրեւիզոյի բասկետբոլիստները մրցանակային տեղի համար խաղում պարտության մատնեցին Ռուսաստանի ԲԿՄԱ-ին՝ 95-90 (34-53):

Մրցաշարի անհաջողակները՝ Բելգրադի «Ցրվենա զվեզդա» եւ «Պարտիզան» թիմերը վիճարկեցին 5-րդ տեղը: Վերջինս հաղթանակ տարավ այդ սփոփիչ խաղում: Հաշիվն է 87-79 (45-42):

Մրցումների լավագույն խաղացող ճանաչվեց ամերիկացի Ռենդել Ալեքսիսը, որը հանդես է գալիս Բեռլինի «Ալբա» թիմում:

Մոսկվայում այժմ անցկացվում է մրցաշար՝ հանրահայտ Ալեքսանդր Գոմելսկու մրցանակի երկրորդ խաղարկությունը: Մրցումներում հանդես են գալիս Մոսկվայի ԲԿՄԱ, Կաունասի «Ժալգիրիս», Բելգրադի «Ցրվենա զվեզդա» եւ Թել Ավիվի «Մակկաբի» թիմերը:

Մրցաշարի առաջին օրը հանդիպեցին ԲԿՄԱ-«Ցրվենա զվեզդա» եւ «Մակկաբի»-«Ժալգիրիս» զույգերը: Թվում էր, թե փորձառու մոսկվացիների համար խնդիր չի լինի հաղթանակ տանել Բելգրադի երիտասարդ բասկետբոլիստների նկատմամբ: Իրոք, առաջին խաղակեսում ԲԿՄԱ-ն շոգափելի առավելության հասավ եւ ընդմիջման գնաց 10 միավորի առավելությամբ՝ 58-48: Սակայն երկրորդ խաղակեսում պայքարն այլ կերպ ընթացավ, եւ «Ցրվենա զվեզդան» հաղթեց 101-98 հաշվով:

Եվրոպական երկրների գավաթակիրների գավաթի խաղարկության հաղթող «Մակկաբիի» առավելությամբ ընթացավ նրա հանդիպումը «Ժալգիրիսի» հետ: Իսրայելցիները հաղթեցին 87-78 հաշվով, իսկ նրանց հաջողության մեջ մեծ դեր ունեցան լեգեոնականներ Լոնյարը եւ Շեֆիլդը:

Այժմ մրցաշարի հաղթողի կոչումը կվիճարկեն «Մակկաբին» եւ «Ցրվենա զվեզդան», իսկ ԲԿՄԱ-ն եւ «Ժալգիրիսը» կմրցեն երրորդ տեղի համար:

ԹԵՆԻՍ

Միջամտում է անձրեւը

Նյու Յորքում շարունակվում է ԱՄՆ-ի բաց առաջնությունը, որտեղ հանդես են գալիս աշխարհի բոլոր ուժեղագույն թենիսիստ-թենիսիստուհիները:

«Մեծ սաղավարտի» վերջին չորրորդ մրցաշարի հաղթողին որոշելուց բացի, այստեղ կանվանվեն նաեւ նոյեմբեր ամսին Գերմանիայում կայանալիք աշխարհի առաջնության մասնակիցները: Առայժմ այդպիսի իրավունք, անկախ Նյույորքյան մրցաշարի արդյունքներից, ձեռք է բերել միայն չիլիացի Մարսելո Ռիոսը: Աշխարհի թիվ երկու թենիսիստը հաշվարկային միավորների քանակով առաջինն է:

Ռիոսը առայժմ լավ մարզավիճակում է գտնվում: Մեկ ամիս առաջ Տինցինատիում անցկացվող մրցաշարում նա պարտություն էր կրել չեխ Դանիել Վացեկից: ԱՄՆ-ի բաց առաջնության մեկնարկում այս երկու թենիսիստները կրկին հանդիպեցին, եւ չիլիացին շատ վստահորեն վրեժ լուծեց իրեն «նեղացնողից»: Ռիոսը հաղթեց 6-4, 6-2, 6-3 հաշվով եւ հաջորդ փուլ դուրս եկավ: Պայքարը կշարունակեն նաեւ Թիմ Հենմանը՝ (Մեծ Բրիտանիա), որը առավելության հասավ Սկոտտի Դրեյքերի (Ավստրալիա) նկատմամբ եւ Եվգենի Կաֆելնիկովը (Ռուսաստան), որը պարտության մատնեց Դենիս վան Շեռինգենին (Բելգիա)՝ 6-1, 6-2, 6-4: Տղամարդկանց մրցաշարի ամենախոշոր անակնկալը առայժմ Պետր Կորդայի (Չեխիա) պարտությունն է: Համաշխարհային դասակարգման ցուցակում չորրորդ տեղ գրավող թենիսիստը 6-2, 3-6, 2-6, 1-6 հաշվով տանուլ տվեց գերմանացի Բեռն Կարբախերին:

Կանանց մրցումներում անսպասելի արդյունքներ չեն գրանցվել: Ուժեղագույնները հաջողությամբ հաղթահարում են մրցակիցների դիմադրությունը:

Գերմանուհի Շթեֆի Գրաֆը, որը 5 անգամ նվաճել է ԱՄՆ-ի բաց առաջնության հաղթողի կոչումը, հանդիպելով իր 18-ամյա հայրենակցուհի Մարլեն Բաումգարտների հետ, առանց լուրջ քանների պարտության մատնեց նրան՝ 6-0, 6-1: Ավելի ուժեղ մրցակցուհի ուներ աշխարհի թիվ երեք թենիսիստուհի Յանա Նովոտնան (Չեխիա): Սակայն նա էլ 6-4, 6-3 հաշվով հաղթեց Ջենիֆեր Կապիատիին (ԱՄՆ):

Մոնիկա Սելեշը (ԱՄՆ) պարտության մատնեց Ֆլորենս Լաբատին (Ֆրանսիա) 7-6, 6-2: Ռուսաստանցի Եվգենիա Կուլիկովսկայան հաստատել է երկու խաղ անցկացնել: Առաջին շրջանում տարած հաղթանակից հետո երիտասարդ թենիսիստուհին չկարողացավ իր հաջողությունը զարգացնել եւ վերջին հանդիպումը տանուլ տվեց ամերիկուհի Աննի Միլլերին՝ 1-6, 6-4, 2-6 հաշվով:



Յանա Նովոտնա

Առաջնության կազմակերպիչները դժվար կացության մեջ են: Տեղացող անձրեւի պատճառով շատ հանդիպումներ տեղի չունեցան, եւ հայտնի չէ, թե երբ հնարավորություն կլինի դրանք անցկացնել:

ՖՈՐՄՈՒԼԱ-1

Առաջնության 13-րդ փուլը

«Ֆորմուլա-1» ավտոմեքենաների աշխարհի առաջնության 13-րդ փուլը շատերի համար իրոք դժբախտ փուլ էր:

Բելգիայի «Սպա-Ֆրանկոշամպս» մրցարշավարանում վազքը սկսվեց հորդ անձրեւի ուղեկցությամբ: Թաց մրցուղին չափազանց դժվարացրել էր մարզիկների գործը, եւ առաջին իսկ շրջանում սկսվեցին վթարները: Մի քանի մեքենաներ ընդհարվեցին, եւ կազմակերպիչներն ստիպված եղան դադարեցնել մրցումները: Մրցավազքը վերսկսվեց համարյա մեկ ժամ անց, երբ մրցուղին մաքրվեց ավտոմեքենաների մասերից ու թափված յուղից: Շորս մասնակիցներ այդպես էլ չշարունակեցին պայքարը:

Շուտով նոր վթարից հետո պայքարից դուրս մնաց ընդհանուր հաշվարկում առաջատար, Ֆինն Միկա Հակկինենը («Մաքլարեն-Մերսեդես»): Գերմանացի Միխայել Շումախերը («Ֆերրարի») 9-րդ շրջանից սկսած գլխավորեց մրցավազքը, եւ թվում էր, թե հաղթանակը նրանը կլինի: Սակայն 25-րդ շրջանում Շումախերը, երբ մեկ շրջան նստած էր անցել Հակկինենի թիմակից, կանադացի Դեյվիդ Կուլտհարդից եւ փորձում էր շրջանցել նրան, ընդհարվեց եւ չկարողացավ ավարտել մրցումները: Շումախերը վթարի պատճառը Կուլտհարդին է համարում, բայց շատերը մեղադրում են հենց իրեն՝ գերմանացի մարզիկին:

Ուժեղների դուրս գալուց հետո կրկնակի հաղթանակ տարավ «Ֆորդան» թիմը: Փուլի հաղթող դարձավ Դեյմոն Հիլը (Մեծ Բրիտանիա), երկրորդը կրտսեր Շումախերն էր՝ Ռալֆը: Այնպես որ՝ 13-րդ փուլը երջանիկ էր «Ֆորդան» թիմի ներկայացուցիչների համար: Երրորդ տեղը գրավեց ֆրանսիացի ժան Ալեզին («Ջորդեր»):

Այժմ, 13-րդ փուլից հետո, ընդհանուր հաշվարկում ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ. կրկին առաջատար է Միկա Հակկինենը՝ 77 միավոր, երկրորդ տեղում է ընթանում Միխայել Շումախերը՝ 70 միավոր, իսկ երրորդը Դեյվիդ Կուլտհարդն է՝ 48 միավոր:

ԲԱԺԻՆԸ ԿԱՐՈՒՄ Է
ՌԱՖԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ՇՈՒԿԱ

Հայկական արտադրանքի փառատոն՝ հեքիա՞թ, թե՞ իրականություն

Տեխնոկրատները իրենց ուսերին են վերցնում Հայաստանի տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու ծանր բեռը, քանի որ «Հայաստանում ուրիշ ուսեր չկան»



Ինչպե՞ս կարելի է գովազդել եւ պրոպագանդել հայկական արտադրանքը, ինչպե՞ս զարգացնել ներքին կոոպերացիան մարզերի միջեւ, ինչպե՞ս վերագրավել Հայաստանի շուկան տեղական արտադրանքով, ինչպե՞ս զարգացնել արտադրությունը եւ վերջապես, ինչպե՞ս գտնել Հայաստանի տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու ուղիները: Պարզվում է, որ այս կարեւոր հարցերի պատասխանները գտել է Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունը. ուղղակի անհրաժեշտ է կազմակերպել Հայկական արտադրանքի փառատոն:

Սեպտեմբերի 3-ին Ժուռնալիստների միությունում հրավիրված մամուլի ասուլիսում ներկայացվեցին փառատոնի նպատակները ու ծրագիրը, որը մի նախադասությամբ կարելի է ձեւակերպել այսպես՝ «միամիտ մարդկանց բարի ցանկություն», այլ կերպ ասած՝ «քանի որ պետությունը չի կարողանում լուծել արտադրության խնդիրները, գոնե մենք փորձենք սայլը տեղից շարժել»: Փառատոնի նախագծի հեղինակ Վահան Համազասպյանը հայտնեց, որ սեպտեմբերի 20-ից սկսած Հայաստանի բոլոր մարզերում (առայժմ իրենց համաձայնությունը չեն տվել Շիրակն ու Արարատը), կազմակերպվելու են «գիտաճանաչողական էքսպեդիցիաներ» (՞), հայկական արտադրանքի ցուցահանդեսներ, տոնավաճառներ, բիզնես-խորհրդատվություններ, պայմանագրերի ստորագրում, բացի այդ՝ «Քրիստոնյա Հայաստան-1700» անվամբ տուրիստական տուրեր դեպի մարզերի պատմաճարտարապետական կոթողներ, համերգներ, բանվորական մրցույթներ (խոսքն, իհարկե, սոցմրցությունների մասին չէ-Գ. Ս.), գովազդ, կրթական ծրագրեր, մինչեւ անգամ՝ Արեւային սրճարանների բացում եւ այլն: Եվ այս հարուստ միջոցառումների ծրագիրն իր ուսերին է վերցնելու ՀԱԳՍ փառատոնի կազմկոմիտեն, որի մեջ մտնում են մոտ մեկ տասնյակ, հիմնականում տեխնոկրատ գիտնականներ (նշենք, որ ամենեւին չենք փորձում այս հրապարակմամբ նսեմացնել նրանց մասնագիտական կարողությունները ու վաստակը-Գ. Ս.):

Վ. Համազասպյանը ողջ ասուլիսի ընթացքում թերահավատորեն տրամադրված լրագրողներին փորձում էր համոզել, որ այդ հարուստ միջոցառումների ծրագիրը ռոմանտիկա չէ, կարելի է իրականացնել շատ սուղ միջոցներով, մարգոեցների հովանավորությամբ (վերջիններս խոստացել են լուծել տրանսպորտի հարցը), գովազդվելու պատրաստ հովանավորներ գտնելով, «իրար օգնելով», քանի որ փառատոնի նպատակը սուրբ է՝ արթնացնել ժողովրդի, մարզերի բնակչության ոգեւորությունը, ապացուցել, որ Հայաստանում ամեն ինչ դեռ կորած չէ, հիշեցնել, որ մենք ունեցել ենք եւ հիմա էլ ունենք արտադրություններ, բրոդպագանդել, որ զարգանա ներքին կոոպերացիան տեղական արտադրողների միջեւ, սովորեցնել մարզերի գործարարներին, թե ինչպես կազմակերպեն իրենց գործը, մշակել բիզնես-ծրագրեր, վերցնել վարկեր, կատարել մարքեթինգ, վերջապես՝ հիշեցնել, որ «մենք ափսաավոր, ստեղծագործող ժողովուրդ ենք»:

Ի դեպ՝ փառատոնի գովազդն իրականացնող «Դեւ» ֆիրմայի տնօրենը մեզ հայտնեց, որ եթե տեղական արտադրողներն ի վիճակի չլինեն վճարելու գովազդի համար (յուրաքանչյուր մարզում սպառվում են մինչեւ 1000 դոլարի գովազդատուհովանավորներ), ապա հնարավոր է, որ գովազդվեն արտասահմանյան ֆիրմաները:

Հարց է առաջանում, այդ դեպքում ու՞ր մնաց հայկական արտադրանքի փառատոնը կամ արդյո՞ք կան հատկապես մարզերում գովազդելիք արտադրություններ (չհաշված մեկ կամ մի քանի բացառիկ դեպքերը), չի՞ ուշացել արդյոք արդյունաբերողների եւ գործարարների միությունը, որի խնդիրն ի սկզբանե պետք է լիներ տեղական արտադրության զարգացումը եւ արդյունաբերության ներդաշնակ զարգացումը հանրապետության ողջ տարածքով ներառյալ մարզերը, որոնք Երեւանի համեմատ գտնվում են սոցիալ-տնտեսական ավելի ծանր վիճակում: Այն հարցին, թե կա՞ն մարզերի արդյունաբերական ներուժի, Հայաստանի ներքին շուկայի մասին ուսումնասիրություններ ու ինֆորմացիա, որն Համազասպյանը պատասխանեց, որ ինֆորմացիան վերցված է պաշտոնական տեղեկատվությունից, մասնային վարչության տեղեկանքներից, ինչը, բնականաբար, ինչպես ցանկացած պաշտոնական վիճակագրություն մեզանում, հեռու է իրականությունից: Հեռու չէ՞ իրականությունից նաեւ Հայկական արտադրանքի փառատոնը, համենայնդեպս, առաջին տպավորությունը թույլ է տալիս կասկածելու: Տա աստված, որ սխալված լինենք, եւ փառատոնը ծառայի իր նպատակին:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

ՕՏԱՐ ՄԱՍՈՒԼ

Նախկին շաղկապորդի չափերը վերցնելիս

Սկիզբը էջ 1

Իշխանը պնդում էր, որ եղբայրները օգտագործել են իրենց հարաբերությունները պրոմնների գները բարձրացնելու այն աստիճանի, որ կարելի է որակել նաեւ «գողություն»: Վաչե Մանուկյանը նման գործողությունը «անսովոր» չի համարել: Դատարանում փետրվար եւ մարտ ամիսներին տրված վկայությունները բացահայտեցին, որ Մանուկյանը (ազգությամբ հայ, ծնված Սիրիայում, մեծացած Բեյրութում, պրոում է Լոնդոնում, ճանապարհորդում լիբանանյան անձնագրով) մի շարք բազմաթիվ համաշխարհային ներդրումներ ունի իր ընտանիքի անդամների հետ տարբեր թրաստների եւ հոլդինգային ընկերությունների անունով: Դրանց մեծ մասը սկիզբ են առել Լիխտենշտեյնում եւ Կուրասաոյում, որտեղ հարկային պայմանները մեղմ են, իսկ գաղտնապահությունը՝ չափազանց խիստ:

Դատավարության համար ձեռք բերված վկայություններից պարզ է դարձել, որ Վաչե եւ Ռաֆֆի Մանուկյանները իրենց կուտակած փողի (մոտավորապես 450 միլիոն դոլար 1980-1997 թթ. ընթացքում) մեծ մասը վաստակել են մոտ մեկ միլիարդ դոլարի արժողությամբ պրոմնների գնելով Բրունեյի արքաների համար: Այդ պրոմնների թվում եղել են պոլո թակեր, տաբատակալներ, էքսկլյուզիվ հետ առնչվող գոհարեղեն, մի պոյուծ, զբոսանավեր, առանձնատներ եւ մի հյուրանոց Բեւերլի Հիլզում:

Լոնդոնյան «Թայմս» թերթն այժմ Վաչե Մանուկյանին համարում է Միացյալ Թագավորությունում բնակվող 103-րդ հարուստ անձնավորությունը, որն ունի 185 միլիոն դոլար, գումարած համապատասխան եկամուտները: Նրան են պատկանում տասնյակ ավտոմեքենաներ եւ բազմաթիվ առանձնատներ ինչպես Բեւերլի Հիլզում, այնպես էլ Լոնդոնում: Նա հաճախ է ճանապարհորդում դեպի Ֆրանսիական Ռիվիերա, եվրոպական մայրաքաղաքներ եւ Կալիֆորնիա իր 200 ոտնաչափ երկարությամբ զբոսանավով եւ «Գոլֆստրիմ Ջեթ» 20 տեղանոց ռեակտիվ ինքնաթիռով:

Մեկ ամիս տեւած դատավարության ընթացքում արքայազն Ջեֆրիի ֆինանսական կայունությունը, որը մեծ մասամբ «կառուցված» է եղել Մանուկյանի օժանդակությամբ, սկսել է քայքայվել: Սուլթանը նրան ֆինանսների նախարարի պաշտոնից ազատել է: Ջեֆրիի ներդրումների գլխավոր կենտրոն Ամադեո Դեւելոպմենտ կորպորացիան նույնպես քայքայվել է, եւ ըստ որոշ բրիտանական թերթերի, վնասը հասնում է մինչեւ 30 միլիարդ դոլար:

Վաչե Մանուկյանը ծնվել է 1945 թվի փետրվարին, ավագ որդին է միջնակարգ դպրոցի ուսուցչի: Լիբանանյան պատերազմի տարիներին ընտանիքը Լոնդոն է տեղափոխվել, որտեղ Վաչեն, Ռաֆֆին եւ Վարուժանը շուտով կարողանում են հարմարվել քաղաքի Միջին Արեւելքից եկած հասարակության հետ:

«Մինչեւ 1980-ականները նա դասական համարվող հարուստ միջնորդ էր Լոնդոնում ապրող այդ մարդկանց համար, բայց ոչ չափազանց հարուստ», ասում է Խալիկ Թոլոլյանը՝ կոնեկտիկուտի Վեսլեյան քոլեջի պրոֆեսորը, որը երկար տարիներ ուսումնասիրում է հայկական սփյուռքը: 1978 թ. Մանուկյանը բացում է տղամարդկանց հագուստների խանութը: Հետո երկու այլ խանութներ, բոլորը կենտրոնական մասում, Բեկինգեմ պալատի մոտակայքում: 1980-ական թվերին նա հանդիպում է Բրունեյի սուլթանական ընտանիքին եւ շուտով վաստակում նրանց վստահությունը:

Սուլթանին շրջապատող մոտիկ մարդիկ էին, ըստ Բարթոլոմյուի, նրան խորհուրդ տալիս գնումների վերաբերյալ: Սուլթանի հարստությունը հիմնականում գալիս է այն 250 հազար բարել նավթի եկամուտներից, որ «Ռոյալ Դաչ Շել պետրոլյում» ընկերությունը ամեն օր դուրս է բերում հարավ-չինական ծովից: Նրա հարստությունը գնահատվում է մոտ 38 միլիարդ դոլար: Նրան շրջապատող անձնավորություններն անհատապես պայքարում էին նաեւ առանձին արժանանալու սուլթանի ուշադրությանը: Ներքին վեճերն անպակաս էին, ինչպես վկայում են հնդիկ անձնավորության կողմից գաղտնի արված ձայնագրություններից: Դրանցից մեկում հնդիկը հարցնում է Մանուկյանի մասին, որին Ալ-Ֆայադը պատասխանում է կոտրված անգլերենով. «Ծարսափելի, սարսափելի անձնավորություն է: Ոչ ոք նրան չգիտի: Նա շաղկապորդ է Ջերմին փողոցում... եւ աղջիկները է հայթայթում Ջեֆրիին»:

Լոնդոնյան դատավարությունից հետո Մանուկյանը խուսափել է տեսադաշտից: Նյու Յորքից մի փաստաբան, որ գործ է ունեցել Մանուկյանի հետ, ասում է. «Նա չի սիրում առաջին պլանի վրա երեւալ»:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Շուկայական գներից ցածր, 1998 թ. արտադրության ԳԱԶԵԼ տիպի, 3 տեղանոց, մետաղական թափքով, ուժեղացված շարժիչով բեռնատար ավտոմեքենա:

Հեռ. 8-21-40-32-82, 52-54-43, 47-48-84

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

1991 թվի մատչելի արտադրության, կարմիր գույնի (Մոսկվա-Կարելա) մակնիշի ավտոմեքենա, տաս լավ վիճակում պահված, իր պահեստամասերով եւ հարմար գնով:

Դիմել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 22-33-20, 28-04-57, 22-33-40

Հայաստանը մասնակցում է Մարդու իրավունքների Յալթայի միջազգային համաժողովին

Սեպտեմբերի 2-4-ը Յալթայում տեղի է ունենում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանս, որը կազմակերպվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Արեւելյան Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների տարածաշրջանային տնօրենության եւ Ուկրաինայի կառավարության կողմից: Կոնֆերանսը անցնում է «Մարդու իրավունքները՝ հանուն մարդկային զարգացման» խորագրի ներքո: Կոնֆերանսին մասնակցում են բարձրաստիճան պատվիրակություններ տարածաշրջանի մոտ 30 երկրներից: Կոնֆերանսին մասնակցող Հայաստանի պատվիրակության կազմում են ՀՀ նախագահի խորհրդական, Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Պարույր Հայրիկյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ տկն Ալվինա Գյուլումյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների բաժնի պետ պրն Տիգրան Սամվելյանը, ՀՀ արդյունաբերողների եւ ձեռնարկատերերի միության գործադիր տնօրեն պրն Սահակ Բաղդասարյանը եւ «Սահմանադրական իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի նախագահ պրն Գեւորգ Մանուկյանը:

Կոնֆերանսի ընթացքում, Հայաստանի պատվիրակությունը հանդես կգա ելույթներով հետեւյալ թեմաներով. «Ժողովրդավարություն եւ ազատություն խտրականությունից», «Մարդու իրավունքների պաշտպանությունը դատական եւ ոչ դատական պետական մարմինների կողմից», «Մարդու իրավունքների պաշտպանությունը հասարակական կազմակերպությունների կողմից» եւ «Տնտեսական եւ սոցիալական իրավունքներ»:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակ

ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ

Օրաթերթը գեղչ գներով կարող եք բաժանորդագրվել Հայմամուլի կրպակներում կամ Հայփոստի բաժանմունքներում:

ՀԵՂՉ ԳՆԵՐՈՎ

Վեցամսյա բաժանորդագրություն՝ ~~12600~~ 9000 դր.

Եռամսյա բաժանորդագրություն՝ ~~6300~~ 5000 դր.

Ամսական բաժանորդագրություն՝ ~~2100~~ 2000 դր.

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) * տեղեկագրքերով * մագնիսական սկավառակներով * INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 897 Տպաքանակը՝ 3500 Ստորագրված է տպագրության՝ 3. 09. 1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@